Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91.99
X-5X

19712

Ես մի անգամ լսեցի գրադարանի գրքի խօսակցութիւնը փոքրիկ երեխայի հետ և գրի առայ.

Գիրքն ասում էր երեխային. «Սիրելի մանուկ, խնդրում եմ ինձ չվերցնես կեղտոտ ձեռքերով; ես սատիկ կամաչեմ, երբ ուրիշ երեխաներ ինձ մաքուր չտեսնեն։ Մի թող ինձ անձրևի տակ, չէ՞ որ գրքերը նոյնպէս փոքրիկ երեխաների նման հեշտութեամբ կըմրսեն։ Ինձ վրայ չգրես կամ նշան չանես ոչ գրչով և ոչ մատիտով, դա շատ տգեղ է։ Կարդալիս էլ արմունկդ մի դնիր երեսիս, սատիկ ցաւեցնում ես. նոյնպէս բաց մի ձգիր ինձ երեսիս վրայ, քեզ էլ դուր չի գայ, երբ նոյն ձևով հետդ վարուեն ուրիշները։

Թերթերիս մէջ մի դնիր ոչ մատիտ և ոչ էլ որ և է հատ իր՝ բացի բարակ թղթերից, որովհետև դրանից կըփչանայ իմ կազմը։

Եթէ կարդալդ վերջացրել ես և վախենում ես կարդացած տեղը կորցնել, եղունկներով նշաններ մի անիր, այլ պահիր իմ մէջ մի թուղթ կամ գեղեցիկ ժապաւէն, ծածկիր ինձ և դիր նախկին տեղս։ Մի մոռանար, որ քեզանից յետոյ ես դեռ շատ երեխաների էլ պիտի այցելեմ։

Օգնիր ինձ մնալ մաքուր և գեղեցիկ։
Իսկ ես կ'օգնեմ քեզ լինել երջանիկ։

891.99
Ա-58
Ար.
20 JAN 2006
19 NOV 2010

ԱՆԳՈՐԾ ԿԱՆԱՅՔ

I

ԱՇԽԷՆ

Գ. Ե.

1001
T309
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Պետական Գրադարան
7/XI-1922
Անուն, Անունով
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԿՈՒ
Տպարան Ս. Անտոնեանցի.
1903

08 MAR 2013

Дозволено Цензурою. 30 Октября 1902 г. Тифлисъ.

Ա.

Հայրս հարուստ էր. որ նա մնատկայու—այդ ճշմարիտ է, բայց թէ ինչու—այդ չգիտէի. միայն յիշում էի, որ մի օր ստիպուած եղանք թողնել Կէդիկ-փաշայում մեր սեպհական բնակարանը և փոխադրուել Ենի Քափուի յետ ընկած մի անկիւնում ապրելու։ Այդ օրից հօրս հին ծանօթները երես դարձրին մեզանից, և պէտք է ասած որ հայրս էլ չէր ուզում այցելութիւններ անել կամ ընդունել։ Նա ամաչում էր իւր աղքատ դրութեան մէջ երևալ հասարակութեան և միայն կիրակի օրերն էր տնից դուրս գալիս եկեղեցի գնալու և աղքատներին ողորմութիւններ բաշխելու համար։ Նրա աշխարհը ես էի, միայն ես, որ իրեն չէի ծաղրում, երբ տեսնում էի իւր աղքատ դրութիւնը. ես էի, որ ուսումնարանից արձակուելուց յետոյ գնում էի հին կալուածներից մնացած մի քանի խանութների վարձն առնելու և մեր

պէտքերին ծախսելու համար։ Ծայրայեղ խնայողութեամբ ինձ թելադրում էր ծախսել փարաները նա՝ որ, ինչպէս ասում էին իւր ժամանակակիցները, ոսկիներ էր վատնել շռայլ և անհաշիւ, անվերջ։ Նա իւր առանձնութեան մէջ օրուայ մեծ մասն այժմ անց էր կացնում ինքնահիպնոսացումով, նա կարդում էր միշտ կրօնական գրքեր. նա տանջւում էր անցեալի յիշողութեամբ և աղօթքների մէջ փնտռում էր մխիթարութիւն։

Նրա վարած քաշուած կեանքն ինձ չէր զարմացնում. տնտեսական դրութեան փոփոխութեան հետևանքն էի համարում այդ. միայն մտածում էի, թէ նա ինչու՞ սնանկացաւ այդպէս յանկարծ, և մենք աղքատ սկսեցինք ապրել, և չէի կարողանում դրա պատճառը հասկանալ, քանի որ ոչ մի դրական պատասխանով չէին գոհացնում իմ հարցասիրութիւնը նրանք, որոնցից տեղեկութիւններ էի հարցնում։

Հօրեղբայրս, ուրիշ ծանօթներ, մանաւանդ պարտապահանջները, որոնք գրաւեցին մեր ինչքը, պատմում էին, որ իբր թէ հայրս սնանկացած է իւր վարած անառակ կեանքի պատճառով. դա բիչ թէ շատ հաւանական էր, որովհետև մոռացայ ասելու, որ նա երեսուն տարեկան հասակում այրի մնաց և, չնայած իւր ունեցած այնքան դիւրութիւններին, կրկին ամուսնանալու փորձ չարեց։ Պարզ բան էր, որ նա յագեցնում էր իւր պահանջներն այս ինչ կամ այն ինչ կնոջ զոգի մէջ հարիւրներ թափելով։ Մինչդեռ ինքը հաշուետուորը ցոյց տալով հաստատում էր, որ սնանկացած է այն դատի համար, որ ինձ ծանօթ էր։ Եւ իսկապէս այդ դատը տեւեց մօտ 17 տարի շնորհիւ դատական իշխանութեան անկանոն ընթացքին և բէյերի կաշառակերութեան ու անհոգութեան։ Իսկ ինչ վերաբերում էր կրկին ամուսնանալուն—այդ բանը նա բացատրում էր այսպէս. իբր թէ այնքան սիրելիս և պաշտելիս է եղել մօրս, որ նրա յիշատակը չպղծելու համար երբէք չի մտածել երկրորդ անգամ էլ „աշխարհ մտնել“։ Նրա այդ բացատրութիւններն ինձ չէին բաւականացնում և զրկուած ժառանգ լինելուս գիտակցութիւնն ինձ աւելի հակամէտ էր անում հաւատալ միւսներին, այնպէս որ մի անգամ նոյն իսկ խօսք բաց արի նրա մօտ այդ մասին։ Նա ոչինչ չպատասխանեց ինձ. վրաս յառեց իւր մելամաղձոտ և տխուր հայեացքը և կատարեալ լրում արտայայտող ձայնով ասաց.—„Դու էլ... զաւակս...“։ Այդ մի նախադասութիւնն այնքան ներգործեց ինձ վրայ, որ կրկին և կրկին անգամ ներողութիւն խնդրեցի ձեռները համբուրելով և խոստացայ ուրիշ անգամ այլ ոչ շկրկնել այդ անխոհեմ բանը։

Բ.

Մի քանի տարիներ անցան։ Մի օր ես ու հօրեղբայրս գնացել էինք Թէփէ-Բաշիի այգին զբօսնելու։ Նստած ծառուղիներից մէկում, մի մարմարածածկ սեղանի առաջ, դիտում էինք անց ու դարձ անողներին, երբ օրիորդ Սահակեանը, մի քառասնամեայ համեմատաբար թարմ աղջիկ, Ժպտալով բարևեց ինձ, ձեռքը տուեց սեղմելու և խնդրեց մի քանի բոպէ իրեն լսել։ Հօրեղբայրս ակամայ և ակնյայտնի տհաճութեամբ թոյլատրեց ինձ նրան ընկերանալ, և ես ու նա հեռացանք սեղանի մօտից ու սկսեցինք հեռու ծառուղիների երկայնքը մաղալ։ Օր. Սահակեանն սկսեց հարցնել իմ և հօրս որպիսութեան մասին, կատարեալ հոգածութեամբ վերաբերուեց նրա տխուր դրութեանը և չափազանց զգացուած, գրեթէ արտասուքն աչքերին լսեց ինձ, երբ պատմում էի հօրս ցաւերի և տանջանքների մասին։ Նա մանրամասն ուզում էր ամեն բան իմանալ և հարցեր հարցերի ետևից առաջարկում էր ինձ, երբ նրա եղբայրը, որ նրան էր փնտռում այգում, յանկարծ մեր դէմ ելաւ և մի խոժոռ հայեացք ձգելով ինձ վրայ յանդիմանական շեշտով ասաց քրոջը.

—Ես քեզ էի փնտռում, Աշխէն, մինչ դեռ դու այստեղ ինչ որ բան ես որոնում։

—Ոչինչ չեմ որոնում, եղբայր,—պատասխանեց քոյրն զգացուած և բողոքող ձայնով ու վերջին անգամ ձեռս սեղմելով հեռացաւ։

Վերադարձայ հօրեղբօրս մօտ, որի սուրճի բաժակը դատարկուել էր, իսկ իմ բաժին բահաթ լոքումուն (քաղցրեղէն) դեռ մնում էր սեղանի վրայ պնակիկի մէջ։

—Ինչու այսքան ուշացար,—հարցրեց նա նեղացած։

—Խօսում էինք հօրս մասին,—պատասխանեցի միամտութեամբ։

—Ի՞նչ էիք խօսում այսքան երկար. չեմ կարծում, որ նա հօրովդ հետաքրքրուի այժմ էլ, քանի որ հայրդ այլևս մանկացած է և պառաւած. նրան քեզ նման տաքարիւն պատանիներ են պէտք, որոնք տրամադրութիւն ունենան վճարելու։

Առաջին անգամից չկարողացայ հասկանալ նրա միտքը և պատասխանեցի դարձեալ միամտութեամբ.

—Սիրելի հօրեղբայր, չէ որ հայրս իւր այժմեան դրութեան մէջ աւելի շատ հոգածութեան է կարօտ քան առաջ, երբ հարուստ էր ու երիտասարդ։

Նա ուղղակի չպատասխանեց իմ հար-

ցին, այլ կարծես ինքնիրեն շարունակեց.

—Ախ, կործանուի Ֆրանսիան, որ նոր ու անբարոյական բաներ սովորեցրեց մեզ։ Մեր ժամանակ որ կինը կարող էր իւրաքանչիւր տղամարդու հետ խօսել, պչրել և նրան գրաւելու փորձեր անել։ Էհ, ինչ եմ ասում, չէ՞ որ այժմ ամեն բան մոդա է։ Խիղ, ամօթ, սրբութիւն, ամեն բան վերացել է աշխարհից, և մենք դեռ սպասում ենք Աստուծոյ արդարադատութեան։ Ցիսուն տարեկան է այդ կինը, բայց տես ինչպէս է հագնուել, ինչպէս փայլուն է նրա դէմքը, ինչպէս ջահել է նրա հասակը, կարծես երեսուն տարեկան լինի, և ինչու չպիտի լինի, քանի որ խեղճ եղբօրս նման շատերին է մահացրել և ինքն առաւօտից մինչև երեկոյ զուարճացել։ Այդ բաւական չէ, մտածում է դեռ մի խեղճ երեխայի էլ զժուացնել ու նրան ծախել տալ այն, ինչ որ մնացել է հօրից... Ողբան էլ լաւ ու շնորհալի է ժպտում։ Կնոջ ժպիտը հէնց անառակութիւն է։

Հօրեղբօրս երկար ճառախօսութեան ժամանակ մի քանի անգամ ուզեցի ընդհատել նրան և լուսաբանել իւր ասածների իմաստը, բայց նա առանց ուշադրութիւն դարձնելու ինձ վրայ շարունակեց իւր մենախօսութիւնը, մինչև վերջացրեց։ Եւ ամեն բան պարզուեց ինձ համար.

պարզուեց մութ գիշերուայ մէջ, կարծես քնից նոր զարթնած աչքերիս առաջ։ Կամաց կամաց սկսեցի ըմբռնել սակայն այն, ինչ որ դեռ մութ էր մի բոպէ առաջ, և ամաչում էի, ամաչում էի հօրս փոխարէն։ Կասկած չկար, որ օր. Սահակեանը հօրս տարփուհին է եղել անցեալում և ինչպէս շատ շատերին, այնպէս էլ նրան մահացրել է առասպելական գնով ծախելով նրան իւր կապրիզներն և սէրը, և այժմ իւր քաղցր բառերով և հոգածու վերաբերութեամբ ուզում է հօրս և ինձ մոռացնել տալ այն սարսափելի հարուածը, որ անառակութեամբ հասցրել է մեր ընտանիքին։ Այո, պարզ էր այդ, և մինչ հօրս և նրա յարաբերութիւններն առաջնի մահկանացուց առաջ այդ բանը չէին հաստատում։ Սկսեցի յիշել դէպքեր այդ յարաբերութիւններից։ Երբ առաջին անգամ գիւղից Պօլիս եկայ, օդափոխութեան ենթարկուելով հիւանդացայ, այն ժամանակ երեսնհինգամեայ օրիորդն աննկարագրելի հոգածութեամբ ինձ խնամել սկսեց. նա, իբրև իւր որդուն, ինձ ներկայացրեց իւր եղբօրը՝ բժ. Սահակեանին և պարտաւորացրեց նրան ինձ բժշկել, և ինքը քանի գիշերներ հսկեց ինձ վրայ անքուն։ Ճնորհիւ նրա հոգածութեան շուտ առողջացայ և երբ ըսկսեցի ուսումնարան գնալ, նա մեզ մօտ լինելիս շատ անգամ ինձ կրկնում էր դասերս

և գրեթէ երկու օրը մէկ գալիս էր նա մեզ մօտ։ Շատ անգամ նա ժամերով ինձ հետ խօսում էր իմ մանկութիւնից, հարցնում էր, թէ ինչպէս էի ապրում գիւղում, և երբ պատմում էի նրան մեր գիւղի այգիների, մարգագետինների, ջրերի և ընկերներիս մասին, երբ նկարագրում էի, թէ ինչպէս էինք ծիրան գողանում այգիներից և լողանում յատակ մաքուր ջրերում և, որ գլխաւորն է, երբ բացատրում էի, որ կարօտում եմ գիւղը, իմ մանկութիւնն այնտեղ և տանջւում եմ Պօլսում, ուսումնարանի և երկյարկանի հարուստ տան չորս պատերի մէջ, —նա գրեթէ միշտ համբուրում էր ինձ, քաջալերում էր աշխատել և յոյս էր տալիս, որ շուտով գիւղ կը գնանք իւր հետ միասին։ Նա հօրս հետ վարւում էր ազատ մտերմութեամբ մեր տան մէջ, և հայրս ամիսը երկու անգամ նրան փող էր տալիս, բացատրելով որ օրիորդը իւր կալուածների կառավարութիւնը յանձնել է իրեն։ Ինչու։ Եւ այդ բոպէին հասկանում էի, թէ ինչու։ Հօրս մանկանալուց յետոյ նա այլևս չեկաւ մեզ մօտ և, որքան կարծում եմ, հօրս էլ երբէք չտեսաւ, բայց միշտ ինձ տեսնելիս անկեղծ ցաւակցող բարեկամուհու նման նրա և իմ մասին էր հարցնում կարեկցութեամբ։ Շատ անգամ իրենց տանն էի ճաշում դրանից յետոյ, նա ինձ կոչում էր իւր զաւակը և իւր բարե-

կամներին ներկայացնում էր ինձ հպարտութեամբ և ուրախութեամբ՝ մանաւանդ երբ լաւ թուանշաններ էի ներկայացնում։ Երբեմն անյագաբար համբուրում էր ինձ, կրծքին էր սեղմում, երբ առանձին էինք լինում, և երկար լաց էր լինում ձեռներս իրենների մէջ պինդ պահած։ Այդ յաճախ կրկնուող անկեղծ և զգայուն սիրոյ ցոյցերից զգացում էի ես և ինձ երախտապարտ էի զգում նրան, չնայած որ նրա մասին լսել էի, թէ անառակ է նա։ Անառակ բառն այն ժամանակ ինձ չափազանց ծանր էր թւում լսել, և կարծում էի որ անառակ կանայք սիրել չեն կարող ոչինչ և ոչոքի։ Երբեմն մտածում էի, որ այդ կինն ինձ սպանելու է անբարոյականութեան մէջ. բայց միայն զգում էի, ոչինչ չէի տեսնում և յարգում ու սիրում էի նրան։ Իրաւ է, շատ հիւրեր էր ընդունում առհասարակ. բայց նրա բերնից ոչ մի վատ խօսք չէի լսել մինչև այդ օրը, և նրա մասին լսածներս գարշելի և ստոր տարաձայնութիւններ էի համարում. բայց հօրեղբօրս մեղադրող ճառը, որ նա արտասանում էր այնքան լուրջ և սառը, կասկածելու տեղիք չէր թողնում։ Ես հաւատացի, որ նրա ցոյցերը կեղծ էին, որոնցով ուզում էր կաշառել զգացումներս։ Եւ մինթէ նա շատ գիշերներ չէր անց կացնում օտար տղամարդկանց հետ, միասին ընթրում հիւ-

բանոցում և ուշ վերադառնում տուն. քանի՜ քանի՜ անգամներ մինչև ժամը չորսն ոտաստել եմ նրա ընդունարանում, ընկել եմ թիկնաթոռի մէջ, և նա յոգնած մտել է, զարթեցրել է ինձ ու տարել իւր սենեակը, ուր պատրաստել է տուել ինձ համար անկողին, և ես քնել եմ։ Ո՛հ, ի՞նչ տգեղ վարք ու բարք ունեն նրանք, այդ կանայք, որ անառակ են, որոնք առանց խղճալու ընտանիքներ են կործանում, կեանքեր են թառամեցնում և սերունդներ փչացնում. զրանք յաւիտենական անէծքի ծնունդներ են, որոնց մօտեցողը մահանում է դանդաղ, անզգայաբար։ «Օհ, հայրս, հայրս... նա պլծել է իմ մօր յիշատակը, նա մոռացել է մեր օջախի պատիւը, նա թունաւորել է իմ ապագան... նա իմ հայրը չէ... ես նրան ատում եմ...»։ Եւ տանջւում էի հօրեղբօրս արձանային սառնութեան մօտ նստած ու փնտռում էի միջոց շուտ հեռանալու նրա մօտից, կարծես նա յաւիտենական յանդիմանութիւնն էր, և գնալ հեռու, հեռու լաց լինել անվերջ։ Ես ինձ զգում էի անարդուած, խաբուած բոլորից, բոլոր աշխարհից...

Վերջապէս դուրս եկայ այդուց և մտայ ամենախուլ փողոցներն ու սկսեցի թափառել։ Մտածում և տանջւում էի հեռվհետ, աւելի շատ, կարծում էի, որ պատերն ու անցորդներն ինձ ծաղրում էին, երեսիս էին տալիս հօրս

անբարոյականութիւնը։ Գաւառացի պատանին մաքուր է նոյն իսկ Պօլսի ապականիչ մթնոլորտում. այո, այդ բանն ինձ զայրացնում էր, խեղդում էր, որին զուցէ չհաւատայ ընթերցողս, բայց ես իրականութիւնն եմ պատմում։ Մտայ Թակսիմ փողոցը։ Սահակեանենց քառայարկ և հոյակապ տան ճակատն ուշադրութիւնս գրաւեց և ինձանում ծնեցրեց մի միտք, ուզում էի գնալ և ինձ տանջող հարցերի մասին բացատրութիւն պահանջել օրիորդից։ Քայլերս ուղղեցի դէպի տան դուռը և առանց մի բոպէ իսկ մտածելու, որ նրանք, քոյր ու եղբայր, ինձ հանդիպեցան Թեփէ-Բաշիում, մատս դրի դրան զանգի ելեկտրական կոճակի վրայ։ Դուռը բացուեց և դռնապանն ինձ յայտնեց, որ օրիորդը և պարոնը տանը չեն։

Հեռացայ անից և սկսեցի դարձեալ թափառել կողմնակի փողոցներում։ Ես ինձ այնքան լքուած չէի զգում այլևս, ընդհակառակը վրէժ առնելու բաղձանքն ինձ աւելի ուժ էր տալիս մտածելու, թէ ինչպէս նա պիտի ջախջախուի իմ բարկութեան ծանրութեան տակ, եթէ իսկապէս քիչ թէ շատ մաքուր զգացում ունի նա դեռ։ Նրա երեսին կըտայի իւր անամօթ անցեալը. հաշիւ կը պահանջէի հօրս անունով, և նա կաղաչէր, կրպաղատէր, կրխնդրէր ինձ, որ իրեն ներեմ։ Այն ժամանակ ես գոհ

և հպարտ կըլլինէի։ Իսկ ինչ վերաբերում էր հօրս, նրա դատաստանը թողնում էի իւր խղճի խայթին, որ արդէն տանջում էր նրան։

Մի քիչ ժամանակ յետոյ, բայց չեմ յիշում օրուայ որ ժամին, մտայ Սահակեանենց տունը։ Դռնապանը յայտնեց ինձ, որ պարոնն ու օրիորդը վերադարձել են։ Առաջին երեւացող աղախնին յայտնեցի իմ գալու մասին իմաց տալ օրիորդին և նրա առաջնորդութեամբ բարձրացայ մարմարեայ լայն սանդուղներից ու մտայ օրիորդի առանձին բնակարանի դահլիճը, ուր մի քանի րոպէ սպասելուց յետոյ պատիւ ունեցայ նրան ներկայանալու։

Իւր արդուզարդի սենեակում ինձ էր սպասում։

Ներս մտայ և առանց բարեւելու նրան կանգնեցի դրան առաջ մինչև աղախինը մեզ առանձին թողեց։ Նա հրաւիրեց ինձ նստել մի թիկնաթոռի վրայ և սպասել մինչև ինքը կըփոխի շորերը, քանի որ պտոյտից նոր էր դարձել։

Նրա հրաւէրը մերժեցի և շարունակեցի անշարժ մնալ կանգնած տեղս առանց մի բառ իսկ արտասանել կարենալու։

—Ի՞նչ բան քեզ ստիպեց այսպէս անժամանակ գալ ինձ մօտ, սիրելիս։

Չկարողացայ իսկոյն պատասխանել։

Զափազանց լիրբ և յանդուգն հեգնութիւն էր նրա ժպիտը։ Մի քանի անհասկանալի բառ կմկմացի և լռեցի։

Նա հայելու առաջ նստած իւր կորսաժն էր ուղղում և առանց իմ կողմը նայելու յարեց.

—Խօսիր, զաւակս, խօսիր...

Բոպէական շփոթութիւնից յետոյ վախկոտ ձայնով ասացի.

—Ձեր կեանքում երբեւիցէ անկեղծ եղել էք, օրիորդ։

—Այդ ինչ է... սիրելիս... միթէ իմ փոքրիկ բարեկամի հետ միշտ անկեղծ չեմ եղել,—պատասխանեց նա փաղաքշական տոնով և ժպտալով ոտի կանգնեց։ Մազերը ցրուած և կուրծքը բաց մօտեցաւ ինձ և ձեռներս բռնելով զարմացած երեսիս մտիկ արեց ու բացականչեց զգացուած.

—Ա՜խ, տէր Աստուած, այդ որքա՜ն դժգունել ես, աչքերդ վառւում են։

Եւ մի քանի վայրկեան լռելուց յետոյ կատարեալ հոգածութեամբ աւելացրեց.

—Զլինի հիւանդ ես, սիրելիս։ Աստ։ Ինչու ես այդպէս նայում ինձ։ Տենդ ունես։

Ես չէի ուզում նրան հասկանալ և իսկապէս չկարողացայ այն բոպէին հասկանալ, թէ նա որքան է տանջւում է ինձ մօտ, շատ մօտ, և վերջին հարուածը հասցրի.

—Խնդրեմ, օրիորդ, ինձ հետ անկեղծ եղէք, գոնէ ձեր կեանքում միայն մի բոպէ:

Նա ձեռքս միշտ բռնած զգացուած ու անհանգիստ շարունակ նայում էր երեսիս:

—Ասացէք, անկեղծ ասացէք, քանի՞ տարի ապրեցաք հօրս հետ, մինչև որ նրան սնանկացրիք կատարելապէս:

Նա յանկարծ գունաթափուեց, թողեց ձեռքս և սպառնական մի հայեացք ձգելով վրաս հեռացաւ ինձանից: Ցետոյ դարձեալ մօտեցաւ ինձ և դարձեալ ձեռքս բռնեց:

—Այս բոպէիս քեզ դուրս անել կըտայի այստեղից, բայց յարգում եմ հօրդ և սիրում եմ քեզ, իսկ որ գլխաւորն է, հաստատ համոզուած եմ, որ քեզ այստեղ ուղարկողն ով է և ինչ նպատակով... Նրանք մեզ դժբաղդացրին, իսկ այժմ ծաղրում են մեզ:

—Ովքե՞ր:

—Հօրեղբայրդ և ուրիշներ: Թող անեն ինչ որ ուզում են նրանք: Դու մի՛ լսիլ նրանց և վատ մտածութիւններ մի՛ ունենալ. ոչ մի հայր քո հօր նման որդիսէր չէ. նա զերբնական է այս աշխարհում, ինձ շրջապատողների մէջ, և ես նրան յարգում եմ խորապէս զգալով նրա հոգեկան արժանիքները: Արի, նստիր ինձ մօտ, շորերս կըփոխեմ, յետոյ ինչպէս բարեկամներ կընթրենք միասին և կըզուարճանանք,

1001
1309

որքան մեզ թոյլ կըտայ մեր հոգեկան դրութիւնը: Իսկ ես առ միշտ կըմոռանամ քո այսօրուայ արածը, թէև այդ ինձ չափազանց վիրաւորեց:

—Ամաչում եմ, ձեզ մօտ չեմ կարող մնալ... Ներեցէք, ներեցէք ինձ:

Նա գրեթէ գրկած ինձ մօտեցրեց արդուզարդի սեղանին և նրա մօտ եղած մի թիկնաթոռի մէջ նստեցնելով ինքն էլ մօտս նստեց: Ամօթից ճնշւում էի և թոյլ էի տալիս նրան անել ինձ այն, ինչ որ կամենում էր: Թիկնաթոռի մէջ ընկած աչքերս յառել էի յատակի վրայ փռուած գորգին և տանջւում էի, իսկ նա անհանգիստ նայում էր ինձ, երբ յանկարծ գրկեց գլուխս և համբուրել սկսեց արագ արագ դէմքս, ճակատս, մազերս. կրքով, ուժով, կարծես ուզում էր ինձ այրել իւր շնչով, իւր սիրոյ կրակով: Ցետոյ հեռացաւ ինձանից, ընկաւ իմ դէմ եղած մի ուրիշ թիկնաթոռի մէջ և ընկղմուեցաւ խոր մտածութեան մէջ: Նա երբեմն ինձ էր նայում քնից նոր զարթնած և իւր երեսին իւր մօտ չգտած մօր հայեացքով, երբեմն էլ ակնարկը յառում էր պատի անկիւնում կլոր եռոտանի սեղանի վրայ դրուած չվառուող լամպի լուսամփոփին: Մի քանի անգամ պարզ նշմարեցի դէմքի կրած փոփոխութիւնները: Նա ժպտեց, խոժոռեց դէմքը,

դառը ծիծաղեց և վերջապէս կատաղած ոտքի կանգնեց դարձեալ մօտեցաւ ինձ և ձեռքերս բռնած սկսեց ուժեղ թօթուել։

—Ինչու, ինչու եմ սիրում քեզ... Դու, որ ինձ դժբաղդ արեցիր... Գնա, հեռացիր այստեղից... Ես քեզ չեմ սիրում այլ ևս, ես քեզ ատում եմ... Վեր կաց, գնա... ամօթ... Եւ դեռ համարձակւում ես ինձ նախատել... Ես անառակ եմ, ես մնանկացրել եմ քո հօրդ, մնանկացրել եմ նրա նման շատերին... Եւ միթէ իրաւունք չունէի... Տես քառասուն տարեկան եմ, բայց մարմինս իւր կատարեալ համաչափութեան և թարմութեան մէջ... և դեռ շատերին կըխաբի, շատերին կըմնանկացնի... այո... որովհետև դու այդպէս ուզեցիր, և ես հնազանդւում եմ քեզ... հա, հա, հա...

Նա ջղաձգաբար ծիծաղում էր շարունակ. Նրա աչքերը դուրս էին ցցուել, մերկ կուրծքը նկատելի կերպով բարձրանում և ցածրանում էր, շնչառութիւնը ծանր և անհանգիստ էր, և բոլոր մարմնով դողում էր, ցնցւում ու ծիծաղում շարունակ։

Սարսափած հայեացքս յառեցի նրա դէմքին և դողում էի։

—Ախ, այդ աչքերը, այդ աչքերը, որքան նմանում են նրա աչքերին... Ոհ... ես սիրում եմ նրան, սիրում եմ քեզ, սիրում եմ...

Յանկարծ դրկեց դարձեալ ինձ և սկսեց պինդ սեղմել կրծքին և կատաղաբար համբուրել։

Իւր քառասուն տարիների սպասողութեան ուժն էր այդ, որ ուզում էր իմ էութիւնը իւր հետ ձուլել։

Գ.

Ութ տարի յետոյ ուսումնարանը վերջացրած ծառայում էի երեք տարուց ի վեր Օսմանեան բանկում իբրև հաշուապահի օգնական։ Ես և հայրս փոխադրուել էինք Պերա և ապրում էինք բժ. Սահակեանենց տանը համաձայն օրիորդի կտակի, որ կազմել էր մօտ երկու տարի առաջ և կազմելուց մի շաբաթ յետոյ մեռել էր անհերելի մի հիւանդութիւնից, որ բժշկել իզուր ջանացին եղբօրն արհեստակիցները։ Այդ տանը վեց սենեակ ունէինք մեր տրամադրութեան տակ դահլիճով, որ օրիորդի բնակարանն էին կազմում։

Հայրս այլևս առաջուայ չափ տխուր և մելամաղձոտ չէր. այժմ նրա դէմքը փայլում էր ինչ որ արտասովոր և մելամաղձոտ ուրախութեամբ։ Նա նոյն իսկ հիւրեր էլ էր ընդունում, թէև ոչ ոքի չէր այցելում։ Նա առանձին եղած ժամանակ դարձեալ կարդում էր գրելիք միշտ

կրօնական գրքեր և մանկական պարզ ու մաքուր սրտով դիմում էր դէպի արդարութեան մաքրութիւնն ու երկնային խորհրդաւորութիւնը։ Նա միշտ անհամբեր սպասում էր այն ժամին, երբ վերադառնում էի առհասարակ պաշտօնատնից և միասին մի մի բաժակ սուրճ ընդունելուց յետոյ գնում էինք քաղաքից դուրս թափառելու։ Շատ անգամ յետ դառնալիս մտնում էինք Զիշլիի գերեզմանատունը, ուր թաղուած էր մի մեծ բռնջենու տակ օրիորդ Սահակեանի մարմինը, որի դամբարանը շքեղ էր ու պարփակուած վանդակապատի մէջ. ստանալով դրռնապանից վանդակապատի բանալին ներս էինք մտնում հայր ու որդի և միասին ծունկ չորած աղօթում էինք մի քանի վայրկեան, յետոյ վարձատրում էինք դռնապանին ու հեռանում հոգեկան զգալի յափշտակութեան մէջ։ Դրանից յետոյ հայրս այլևս չէր խօսում, այլ ամբողջ երեկոն ընկնում էր մտատանջութեան և միստիքականութեան մէջ։ Մենք մեր գիւղը շրջապատող սուրբերի ծնունդն էինք և Մխիթարեան հայրերի բարեկրօն աշակերտները։ Երբեմն էլ ի նկատի ունենալով հօրս դրութիւնը նրան ստիպում էի գերեզմանատնից հեռանալուց յետոյ գնալ մի այգի, ուր սուրճ էինք ընդունում առհասարակ մի խուլ ծառուղիում նստած։ Այդ ժամանակ հայրս իրեն աւելի լաւ էր զգում, բայց նա չէր

համաձայնւում յաճախ գնալ այդի։

Ութը տարուց ի վեր հասկանում էի արդէն, որ հօրս և օր. Սահակեանի միջև ինչ որ բան է տեղի ունեցել, որով երկուսն էլ դժբաղդացել էին, բայց թէ ինչ, այդ չէի կարողանում բացատրել, գուցէ մի դրամատիքական սիրահարութիւն կամ մի սարսափելի պատմութիւն, որովհետև ֆրանսիական բուլվարային վէպերում միշտ այդպիսի խորհրդաւոր դէմքերի էի հանդիպում, որոնք բոլորն էլ այլ և այլ սարսափելի դիպուածների կամ անգութ թշնամիների սարքած որոգայթների հետևանքն էին. բայց և զարմանում էի, թէ ինչպէս կարող են իմ հասարակ հայրս և հասարակ աղջիկ օր. Սահակեանը վիպական հերոսներ դառնալ։ Եւ սպասում էի մի առթի, որ կարողանամ բացատրութիւն խնդրել հօրից իւր և նրա յարաբերութիւնների մասին, որովհետև չէի համարձակւում հօրս անհանգստացնել կամ յուզել անտեղի տխուր բաներ յիշեցնելով նրան։

Մի օր սակայն չկարողանալով հետաքրքրութիւնս լռեցնել խօսք բաց արի դրա մասին հօրս մօտ։ Այդ օրը միասին այցելել էինք օրիորդի գերեզմանը և ըստ սովորականին միասին աղօթել էինք քառորդ ժամի չափ։ Նրա դէմքը սովորականից պայծառ էր, ինչպէս լինում էր միշտ, երբ այգուց էինք վերադառնում։

Նա իմ հարցման առարկայի մասին այսպէս խօսեց։

—Քսան տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ ծանօթացայ Աշխէն Սահակեանի հետ Թոփ-Քափուի իրենց սեպհական ամարանոցում և ահա ինչպէս։ Մօրդ մահից յետոյ անցել էր վեց տարի. ես շատ հեռու էի քեզանից և եօթը տարուց ի վեր պանդխտութեան մէջ էի։ Ես նոյն իսկ քո ծնունդը չէի տեսել. գիւղից հեռացել էի արդէն երեք ամսից ի վեր, երբ նամակ ստացայ, որ դու ծնուել ես, բայց ոչ մի կերպ չէի կարող գիւղ գալ քեզ տեսնելու և մօրդ գերեզմանն օրհնել տալու համար։ Մեծ հայրդ գործերը խառնակ դրութեան մէջ յանձնեց ինձ և ինքը հեռացաւ Պոլսից։ Նա ուզեցել էր իւր այրի բրոջը ժառանգութիւնից զրկել. այն ժամանակ մեզանում սովորութիւն չկար տան իգական անդամներին բացի բաժինքից ուրիշ բաներ էլ տալ մարդու գնալիս, բայց որովհետև նա մեծացել էր Պոլսում, դրա համար չէր կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ ինքը պիտի զրկուի ժառանգութիւնից միմիայն նրա համար, որ կին է, և ամուսնացաւ մի թուրք բէյի հետ ու սկսեց դատավարել հօրս հետ ժառանգութիւն ստանալու համար։ Երկու կողմն էլ առհասարակ զօրաւոր լինելով, գործը շատ դանդաղ էր

առաջ գնում, և անվերջ պատշաճութիւններով և ձեակերպութիւններով օրից օր ինձ տկարացնում էր ֆիզիքապէս։ Մինչև այն աստիճան ինձ վրայ ազդեց այդ գործի տևողութիւնը, որ բժ. Խորասանճեանն ինձ խորհուրդ տուեց մի առ ժամանակ խաղաղ և անյուզում կեանք վարել, եթէ իսկապէս ուզում էի ապրել։ Յետոյ նա ինձ յանձնարարեց բժ. Սահակեանին, որոնց Թոփ-Քափուի ամարանոցում պիտի անցկացնէի օրերս։ Մի կիրակի օր բժշկի հետ գնացինք այնտեղ, ուր ապրում էր նա իւր քրոջ հետ առանձին. այս վերջինն էլ խոստացաւ ինձ ամեն բանով օգտակար լինել։ Այն ժամանակ բժիշկը հարիւրապետ էր և ծառայում էր Բաբը-Սէրասկէրիյէում. նա հազիւ 32—33 տարեկան կը լինէր։ Ես 37 տարեկան էի, իսկ Աշխէնը, բժշկի քոյրը, 28 տարեկան։ Նրանց տանն ըսկսեցի ապրել. երկուսի կողմից էլ կատարեալ հոգածու խնամք վայելելով, այնպէս որ չէի զգում օտարի տանը լինելս։ Բժիշկը շաբաթուայ մէջ հինգ օր տանը չէր լինում. ես ու Աշխէնն առանձին էինք. ամեն դիւրութիւններ ունէինք իրար սիրելու, բայց ես նրա վրայ նայում էի ինչպէս քրոջ վրայ և ցաւում էի, որ այդ հասակում դեռ չի ամուսնացել։ Նա տեսնողի վրայ թարմ, մաքուր և բարոյական կնոջ տպաւորութիւն էր թողնում, իսկ քաղցր ու

մելամաղձոտ հայացքն արտայայտում էր սիրով և խաբուած հոգու բոլոր տանջանքները։

«—Ինչու այս հասակում չէ ամուսնացած Աշխէնը,—մտածում էի շատ անգամ,—քանի նա ունի գեղեցկութիւն, դրամօժիտ և բաւականաչափ զարգացում, ինչ որ պոլսեցի փեսացուների համար շատ նախանձելի պիտի անէին իրեն,—և չէի կարողանում այս հարցի պատասխանը գտնել, թէև ի զուր պատճառներ էի որոնում։ Մի քանի անգամ բժշկի հետ առանձին եղած ժամանակս հարցրել էի նրան, թէ ինչու քրոջը մարդու չի տալիս, և նա պատասխանել էր ինձ, իբր թէ 28 տարեկան Աշխէնը դեռ ջահել է և արժանաւոր ոչ մի փեսացու դեռ չի խնդրել նրա ձեռը։ Աւելին չէի կարողանում հարցնել մտածելով որ իրաւունք չունիմ նրանց ընտանիքի գաղտնիքն իմանալու, և շարունակում էի կազդուրուել նրանց խնամքների շնորհիւ։ Օրէցօր Աշխէնն աւելի խնամքով էր վարւում ինձ հետ, և զգում էի, որ այդ բանը նրան հաճոյք է պատճառում, զուցէ նա զգում էր արդէն, թէ որքանխորապէս զգացում եմ ես այդ խնամքներից։ Մի քանի անգամ ձեռքը սեղմելով երեխայի նման լաց եմ եղել և ասել. «Ձոտ բարի ես, Աշխէն...»։ Նա ժպտալով պատասխանել էր միշտ.—«Ուզում եմ, որ օտար երկրում չզգաս ընտանիքի

և մօր հեռաւորութիւնը...»։ Այժմ, երբ յիշում եմ այդ խօսքերն ու նրա ժպիտը, չեմ կարողանում երախտագիտութեան արտասուքս զսպել։

Հայրս լռեց, հանեց գրպանից թաշկինակը և աչքերը սրբեց, որոնք յիրաւի լցուել էին արտասուքով։ Ես էլ զգացուեցի։ Բոպէական լռութիւնից յետոյ շարունակեց նա.

—Երեք ամիս էր արդէն, որ ապրում էի Սահակեանենց տանը, և մեր օրերը միշտ միակերպ էին անցկենում։ Ինչպէս ասացի, բժիշկը շաբաթը միայն երկու անգամ էր գալիս քաղաքից մեզ մօտ, և հիւրեր չէինք ընդունում, այնպէս որ գրեթէ միշտ մենակ էինք ես ու Աշխէնը հեռու արուարձանում, ծառերով շրջապատուած տաղաւարում։ Աշխէնն ամեն օր ինձանից վաղ էր վեր կենում անկողնից և աղախնին ուղարկում էր ինձ զարթեցնել։ Լուացուելուց յետոյ մտնում էի ճաշասրահի տերբասը, ուր մարմարածածկ ընկուզենու սեղանի վրայ կաթ ու սուրճ բաժակների մէջ ածած ինձ էր սպասում նա։ Ժպտալով բարևում էինք միմեանց։ Նախաճաշում էինք շատ թեթև, յետոյ ցած էինք գնում պարտէզ և մի ժամի չափ միասին խօսակցելով շրջագայում. յետոյ բարձրանում էինք վերև ու քաշւում նախասենեակը, ուր ես կարդում էի, իսկ նա զբաղւում էր ձեռագործով։ Ժամը 12-ին ճաշում էինք,

յետոյ քնում էի ես մինչև նախընթրիքի ժամը, իսկ նա շարունակում էր կարել, անվերջ կարել։ Ստանալով նախընթրիքի ժամանակ մի-մի բաժակ սուրճ և մի քիչ թխուածք, գնում էինք լուռ այգիներում թափառելու մինչև կէս գիշեր, ապա վերադառնում էինք տուն, ընթրում և քնում իսկոյն։

«Մի օր տուն մտնելով բարձրացանք ճաշասրահ և շարունակում էինք ման գալիս մեր սկսած խօսակցութիւնը, որը, որքան յիշում եմ, առաւօտեան կարդացածս գրքի մասին էր։ Ան զգալի կերպով վերջացաւ ընթրիքը, որովհետև մենք դեռ շարունակում էինք խօսել։ Յանկարծ լռեցինք երկուսս էլ և ընկանք ծանր և տխուր մտքերի մէջ։ Մի բանի րոպէ լռելուց յետոյ ասացի.—«Աշխէն, քնելու ժամանակ է»։ Նա ոչինչ չպատասխանեց։ Ես բարձրացայ ու գիմեցի դէպի ննջասենեակս տանող դուռը։

«—Կաց, ուր ես գնում,—ասաց նա ինքն էլ ոտի կանգնելով։

«Ցետ դառայ, մի քանի քայլ մօտեցայ իրեն և կանգնեցի։

«—Ինձ ասելիք ունիս։

«—Ո՛չ... Գնա՛ քնիր... Ուրիշ անգամ...

«Նա անհանգիստ էր, գուշակում էի որ մի բան նրան յուզում էր, դրա համար մօտեցայ նրան և ձեռը բռնելով ասացի։

«—Աշխէն, ինչ որ ուզում ես, ասա՛, քեզ լսելու պատրաստ եմ, և ինչ որ հրամայես, կը կատարեմ։

«—Ոչինչ չունեմ ասելու, գնա՛, հանգստացիր, արդէն շատ ուշ է, իսկ դու պարտաւոր ես հոգալ քո բժշկութեան մասին։

«—Խաբում ես ինձ, Աշխէն։

«—Խաբում եմ քեզ,—հարցրեց նա հեգնական ծիծաղով։—Խաբում եմ... Ո՛չ... Դու այդ չես նկատել. քեզ խաբում եմ սկսած այն օրից, երբ սկսեցինք իրար հետ «դու»-ով խօսել, այսօր ճիշտ քսանհինգ օր է,—աւելացրեց նա յանդիմանական և միանգամայն աղերսալի ձայնով. կարծես յանցաւոր էի, որ ինձ խաբելը չէի զգացել։

«—Ի՞նչպէս կարող էի իմանալ, որ ինձ խաբում ես, քանի որ քեզ այնքան հաւատում եմ։

«—Դո՛ւ... զգացում չունիս...

«Գլուխը կախ դցեց յանկարծ ու հեռացաւ ինձանից։

«Ի հարկէ հասկանալի է քեզ, զաւակս, թէ որքան զարմացայ և յանցաւոր զգացի ես ինձ։ «Ի՞նչ էի արել նրան, ինչ բանով էի վշտացրել և ինչ պէտք էր անել նրա «սիրտը առնելու» համար»—մտածեցի ես իսկոյն, մինչդեռ նա արդէն հեռացել էր սենեակից։

«Այդ գիշեր շատ անհանգիստ անցրի։ Առաւօտեան ուշ զարթնեցի և երբ մտայ ճաշարան, այնտեղ ոչ ոք չկար։ Նախաճաշը պատուիրեցի ազախնին և ըստ սովորականին ամենօրեայ պտոյտն անելու փոխարէն մտայ նախասենեակն ու սկսեցի կարդալ։ Մինչև կէս օր Աշխէնը չերևաց, ճաշի ժամանակ միայն տեսայ նրան, հետս չխօսեց նոյն իսկ։ Յետոյ դարձեալ հեռացաւ տնից և գնաց այգի։ Անցան մի քանի օրեր, բժիշկը եկաւ և մեր միջից սառնութիւնը վերացրեց ըստ երևոյթին, թէև այդ սառնութիւնն զգալի էր մեզ իւրաքանչիւր րոպէ, որը բժիշկը չնկատեց սակայն։ Մօտ ութ օր անցել էր այդ օրից, երբ առիթ ունեցայ Աշխէնի հետ խօսել և հարցնել իւր տխրութեան և սառնութեան պատճառը։ Նրանից առաջ նա միշտ խուսափում էր ինձանից։

«—Աշխէն,—ասացի նրան ճաշից յետոյ, երբ նա գնաց դահլիճ և ես հետևեցի նրան,—մի քանի օր է, որ բոլորովին փոխուել ես, հիւանդ ես արդեօք, ինչ ունես։

«—Ոչինչ,—ասաց այնպիսի տոնով, որ նշանակում էր նաև «քեզ ինչ»։

«—Ի՞նչպէս թէ ոչինչ, չէ՞ որ այդ ցաւ է պատճառում է ինձ։

«—Ցաւ է պատճառում ձեզ իմ տխրութիւնը, և դուք պատճառը չգիտէք հը՞մ,—և

ժպտաց։

«—Ո՞րտեղից կարող եմ իմանալ, եթէ դուք չես յայտնիլ։

—Եւ սպասում էք, որ պիտի յայտնեմ ձեզ, որ ծիծաղելի՞ դառնամ ձեզ մօտ... Ո՞չ, ոչ, ի զուր մի փորձէք ինձ խոստովանեցնել... Ես չեմ ասիլ, թէ ինչո՞ւ եմ տխուր... Բայց տանջւում եմ, տանջւում եմ...

«—Հեմ հասկանում քեզ։

«—Հես հասկանում, հա՜... չես հասկանում, իսկ ես... քեզ սիրում եմ...

«Զանթահարուած զգացի ինձ։

«—Սիրում ես ինձ և ինչո՞ւ, ինչ զգացում է այդ։

«—Դա մի այնպիսի զգացում է, որ ահա երկրորդ անգամն է թռնաւորում իմ արիւնը և դանդաղ ու հեշտալի ցաւ յառաջացնում իմ սրտում։ Բայց ձեզ ինչ պէտք է հասկանալ այդ։ գնացէք ձեր սենեակը և հանգստացէք... Դուք հիւանդ էք, դուք պարտաւոր էք ձեր մասին միայն հոգալ, իսկ ես... ինչ որ ուզում եմ, կըլինեմ...

«—Աշխէն...

«Մի քանի րոպէ չկարողացայ ոչինչ խօսել, մինչդեռ նա լալիս էր, բայց շուտ սառնարիւնութիւնս գտայ և մօտենալով նրան, բռնեցի ձեռքից թոյլ տուեց, որ իրեն նստեց-

նեմ գիւանի վրայ, և իւր մօտ նստեցի։

«—Աշխէն, անկեղծ ասա, իսկապէս սի-սիրում ես ինձ։

«Կանացի նուրբ, յանդիմանիչ և քաղցր ակնարկը յառելով վրաս ժպտաց ու ասաց.

«—Կասկածում ես...

«—Ո՛չ, չեմ կարողանում, այլ զարմանում եմ։ Քո զգացումն ինձ օտարոտի է թւում։ Զէ՞, որ մենք շատ հեռի ենք։ Եթէ լինէի պոլսեցի, եթէ իմանայի անգլիերէն, թուրքերէն և ֆրանսերէն ազատ խօսել, եթէ եղած լինէի Պարիզում, եթէ ունենայի աչքի ընկնող հարստութիւն և, որ գլխաւորն է, եթէ երբէք ամուսնացած չլինէի, այն ժամանակ ես կըլինէի նախանձելի և արժանի փեսացու քեզ համար, և դու կարող կըլինէիր ինձ սիրել ու ինձ բաղդաւորեցնել։ Մինչդեռ այժմ բոլորովին ուրիշ բան է։ Գիւղացի մի մարդ եմ, որ Մխիթարեան հայրերի մօտ սովորեցայ միմիայն հայերէն ու ֆրանսերէն կարդալ ու աղօթք անել միշտ. չգիտեմ մայրաքաղաքի քաղաքավարական ձևակերպութիւնները, և իմ զգացումներն այնքան կոպիտ են, որ չեն կարող քեզ նման ընթացք աղջկայ զգացումների հետ համերաշխուել, այլ միայն քեզ գուցէ զզուանք ազդեն, իսկ, որ գլխաւորն է, ունեմ մի քանի հազարների մի չնչին գումար, որ դատարանի քմահաճոյքին է յանձնուած։ Ունեմ վերջապէս ծնողներ, զաւակ և եղբայրներ, առանց որոնց ես չեմ կարող ոչինչ անել։ Այս հաղած, շորերը մի քանի բառեր սովորած և ունեցած համբաւիս մասին մի մտածիլ լաւատեսի նման. ես միշտ նոյն գիւղացին եմ և չեմ կարող մեր պապենական աւանդածները մոռանալ։ Մինչդեռ դու ջահել, գեղեցիկ, զարգացած և հարուստ ես, այդ բարեմասնութիւններով կարող ես աշխարհի ամենաերջանիկ կանանցից մին դառնալ, քեզ արժանի փեսացու ունենալ, իսկ ես արժանիներից չեմ։ Մտածիր նաև, որ եղբայրդ մեծ դեր է խաղում քո ամուսնական գործի մէջ, և վստահ եմ, որ նա չի կարող թոյլ տալ, որ իւր քոյրը թողնէ Պոլիսը և գնայ ապրի Սըվազի գիւղերից մէկում։

«—Բայց ես այդ ուզում եմ, և ոչ ոք իրաւունք չունի ինձ խոչընդոտ լինելու բացի քեզանից...

«—Բայց չէ՞ որ մեր կեանքի պայմաններն իրար հակասում են։

«—Չեն հակասում, երբէք։ Ես քեզ սիրում եմ, ահա ամեն բան։ Ասում ես, որ դու աղքատ ես, իսկ ես հարուստ. բայց չէ՞ որ վազուց եմ զգացել, որ փողը մարդուն երջանկութիւն չի տալիս։ Նիւթական պէտքերի հետ մարդ պէտք է և բարոյական ու ֆիզիքական

պահանջներին բաւականութիւն այտ։ Մարդկանց չեմ հաւատում այլ ես, որովհետև շարաշար խաբուեցի նրանցից, և նրանց մէջ միայն քեզ գտայ, որին կարելի է հաւատք ընծայել, և սիրեցի քեզ, որովհետև քեզանում տեսայ կեանքի վրայ գիտակցական աչքով նայող մի բարոյականութիւն։ Իրաւ է, չես կարողանում խօսել մի քանի լեզուներով, բայց դու աւելի կրթուած ես մեր բոլոր օտարախօս երիտասարդներից, և որ գլխաւորն է, դու բարի սիրտ և ճշմարիտ սէր ունես ամեն բանում և ամեն ժամանակ։ Ասում ես, որ չափահաս ես արդէն. չէ՞ որ միայն տասը տարով ես ինձանից մեծ և պահել ես ընտանեկան բարոյականութեան մէջ քո ֆիզիկական և հոգեկան ուժերդ։ Ես սիրեցի քեզ, ես երազեցի քո կինը դառնալ, որովհետև դու ինձ արժանի ամուսին կըլինես։

«—Ծնողներ, զաւակ և եղբայրներ ունեմ։

«—Կըլինեմ ծնողներիդ աղջիկը, զաւակիդ մայրը և եղբայրներիդ քոյրը. նրանց բոլորին կըսիրեմ, հաւատա՛, այո՛, հաւատա՛, որ բոլորին կըսիրեմ, միայն դու սիրիր ինձ, և ես երջանիկ կըլինեմ։ Խօսիր, սիրո՛ւմ ես ինձ... մի կեղծիլ զգացումներդ... Լաց ես լինո՛ւմ... ուրեմն ճշմարիտ է՞, որ սիրում ես ինձ, ասա՛, ասա՛...

«—Աշխէն...

«Նա բռնեց ձեռքս, սրտին սեղմեց, յետոյ գլուխն ուսիս վրայ դնելով սկսեց լաց լինել։

«—Անգուիթ... անզգա՛յ...

«Ափոսիթուել էի, չէի իմանում ինչ պատասխանեմ։ Հաւատա՛, զաւակս, որ մինչև այդ օրը ես նրան սիրել էի իբրև քոյրս. նա ինձ համար հրեշտակ էր և նրան ցանկանալ սըրբապղծութիւն էի համարում, նախ որովհետև նրանց տանն էի ապրում, և քոյր ու եղբայր անկեղծ խնամում էին ինձ, երկրորդ, որովհետև սիրել էի մօրդ, պաշտում էի նրա յիշատակը և նրան հանդերձեալ աշխարհում տեսնելու յոյսս ինձ չէր թոյլ տալիս օտար կանանց մասին մտածել։ Դրա համար և չփորձեցի ամուսնանալ երկրորդ անգամ։ Եւ յիրաւի, նրա մահից յետոյ ամուսնանալ նշանակում էր պղծել նրա յիշատակը, որ տասներկու տարի շարունակ բաժանեց ինձ հետ իմ կրած բոլոր դառնութիւններն ու ուրախութիւնները, նա ծնաւ և իմ զաւակը։ Այրիութեանս երկար ժամանակամիջոցին ես զգում էի, որ երկրորդ ամուսնութիւնն ինձ համար դժոխք պիտի լինէր, որովհետև չպիտի կարողանայի երկրորդ կնոջս էլ այնպէս սիրել, ինչպէս սիրել էի մօրդ, և ի հարկէ իրաւունք էլ չպիտի ունենայի նրանից սէր պահանջելու։ Այո՛, այդ զգում

էի և դրա համար հէնց մերժեցի շատ կանանց, նոյն իսկ օրիորդների, որոնք ինձ խոստովանեցան, թէ սիրում են ինձ։ Բայց Աշխէնին մերժել չէի կարող. զգում էի, որ նրան սիրում եմ, իրաւ է թէ ես ինձ նոյն իսկ չէի ուզում խոստովանել այդ, բայց նրա խոստովանութիւնն արեց այն, ինչ որ վաղուց սպասում էի, որ պիտի լինի։ Զգացի, որ նրանից հեռու չեմ կարող ապրել, բայց... Ի՞նչ պէտք էր անել... Ընդունել նրա սէրը չէի կարող, մերժել—դարձեալ ոչ։ Եւ մտածում էի, տանջւում էի, իսկ նա կրկնում էր.

«—Անգութ... անզգայ...

—Աշխէն, լսիր ինձ,—ասացի վերջապէս...

«—Ինձ մի խանգարիլ, ոչինչ չեմ ուզում լսել... Դժբաղդ եմ, դժբաղդ...

«Այլ ևս չէի կարող դիմանալ։ Ծռեցայ և համբուրեցի նրա մազերը։ Նա ցնցուեց, վերկացաւ և աչքերն արտասուալից ու ժպտալով ասաց ինձ.

«—Դու շատ բարի ես, ես զգում էի, որ ինձ սիրում ես։ Շնորհակալ եմ։

«Եւ գիրկս ընկնելով կրկին ու կրկին համբուրում էր ինձ։

Դ.

—Կարծեմ աւելորդ է ասել, որ Աշխէնն ուրախ էր,—շարունակեց հայրս բոլորովին յուզուած.—Նա այնքան ուրախ էր, որ չեմ կարող բացատրել, բայց եթէ ուզում ես այդ հասկանալ, նայիր երեսիս և տես որքան դժգոյն և և յուզուած եմ ես։

Պատմելիս նրա ձայնը դողդողում էր և նա ցնցւում էր յուզումից, այնպէս որ խնդրեցի նրան իւր պատմութեան շարունակութիւնը երկրորդ օրուայ թողնել, վախենալով որ յուզումը կարող է նրան վնասել։

—Ո՛չ, զաւակս, կըպատմեմ քեզ ամեն բան. պատմելիս ես ինձ թեթևացած եմ զգում։

Եւ առարկութիւններիս ուշ չդարձնելով այսպէս շարունակեց նա.

—Որոշեցինք եղբօրը յայտնել մեր սէրը և նրա հաւանութիւնը ստանալ։ Վերոյիշեալ բացատրութիւնից երկու օր յետոյ բժիշկը եկաւ։ Առհասարակ ջանում էի նրան քիչ երևալ, զգի նման թագնւում էի մենութեան և լռութեան մէջ անհուն դողով։ Տասնեհինգամեայ դպրոցականից աւելի անմեղ էի։ Քրոջը համբուրելուս և մեր երկու օրուայ սիրահարութեան մասին լսելով ինչ պիտի ասէր նա։ Մինթէ իրաւունք չունէր երեսիս թքել ու ծառաների ձեռքով դուրս անել ինձ այն տնից, ուր գտածս անկեղծ հոգածութեան փոխարէն կատարեցի զզուելի մի գործ։ Անդունդի վրայ կախուած էի զգում ինձ և երկու ձեռքով պինդ բռնած

էի երկու բարակ ոստեր, որոնցից մին Աշխէն էր, իսկ միւսն եղբօր սէրը դէպի նա. դրանք շատ տկար էին յանցանքիս ծանրութիւնը կրելու համար։

«Ուրտադոլս ի զուր էր։ Ճաշի ժամանակ յայտնուեց, որ բժիշկը փոխ հաղարապետի աստիճանով ուղարկուում է Եմէն։ Նա շատ էր ցաւում, որ ինձանից պիտի բաժանուի, որովհետև նա ինձանում գտել էր արժանաւոր յատկութիւններ. բայց և յոյս ունի, որ շուտ կը վերադառնայ, էլի իրար բարեկամներ կը լինինք։ Ինչ երկարացնեմ. նա շատ սիրով վարուեց ինձ հետ։ Երեք ժամի չափ խօսում էինք, բայց նա ոչ մի ակնարկութիւն չարեց քրոջ և իմ սիրոյ մասին։ Աշխէնը երևի ոչինչ չէր ասել նրան և ես չափազանց ուրախացայ դրա համար, որովհետև բժշկի մեկնելով ես էլ կը հեռանայի քրոջից, և այս հեռաւորութիւնը մեր անխոհեմ սիրուն վերջ կըտար։

«Ժամը վեցին բժիշկը ոտի կանգնելով ասաց.

«—Ես գնամ. ուշանում եմ։

«Մենք մեր ամբողջ խօսակցութեան ժամանակ շատ էինք խնդրել, որ գէթ այդ գիշերը մեզ մօտ անցկացնի, բայց ի զուր. նա ստիպուած էր տեսնել փոխ հրամանատարին երկրորդ օրուայ ճանապարհածախս,

օրդեր և հրահանգներ ստանալու համար։ Հրամանն անսպասելի կերպով էր յայտնուած իրեն, և մենք միայն շոգենաւում պիտի կարողանայինք մի քանի բոպէ խօսել 'իրար հետ և հրաժեշտ տալ միմեանց։

«Վերկացանք, անցանք հիւրասենեակի միջով և նախագաւթի սանդուղներից սկսեցինք ցած իջնել։ Դռան մօտ սպասաւորը բժշկին յանձնեց իւր վերարկուն և դուրս եկանք։ Ցնից մինչև տրամվէյի կայարանը քաշեց կէս ժամ. այստեղ նրանց թողեցի պարսպի դռան առաջ և գնացի մի կառք վարձելու։ Եօթը ժամին հազիւ կարողացայ քոյր ու եղբօր իրարից բաժանել։ Աշխէնը լաց էր լինում, և բժիշկը չափազանց յուզուած էր։

«—Արդէն ուշանում էք, Լևոն էֆէնդի, լաւ չէ փաշային սպասեցնել, շտապեցէք։

«Վերջին անգամ քրոջը համբուրելով նա կառք բարձրացաւ և բռնեց իմ ձեռքն ու պինդ սեղմելով ասաց, մինչդեռ Աշխէնը հարևան պատի տակ քաշուած թաշկինակը չէր հեռացնում աչքերից.

«Տեսնում էք քրոջս, պ. Սէլվեան. մեկնելով Պոլսից նրան անոր և անմխիթար եմ թողնում. նա մենակ է, խնդրում եմ ձեզ նրա մօտ մնաք մինչև կը վերադառնամ Եմէնից։ Գիտեմ թէ որքան ծանր է ձեզ յանձնածս պաշտօնը,

բայց վստահ եմ, որ յաջող կըկատարէք իմ խընդիրը, որովհետև ընտանիքի հայր եղած էք արդէն։

«Առանց ոչինչ պատասխանելու գետինն էի նայում։ Կառքը դանդաղ սկսեց առաջ գնալ, բժշկի ձեռքից բռնած ես էլ մի քանի քայլ արի։ Նա վերջին անգամ մտերմաբար սեղմեց ձեռս և կառքը սրարշաւ հեռացաւ։

«Մի քանի վայրկեան չկարողացայ հասկանալ, թէ ինչ պատահեց ինձ, բայց շուտ գիտակցութիւնս իւր բոլոր ծանրութեամբ սկսեց ճնշել ինձ։ Ծրագրներս փչացան։ Բժշկի մեկնելը փոխանակ Աշխէնից հեռանալու նրան աւելի մօտենալու առիթ տուեց ինձ։ Նա վստահաբար ինձ յանձնեց քրոջ խնամակալութիւնը, մինչդեռ ես ուզում էի հեռանալ նրանից, մոռանալ նրան. «Դժուար է,—մտածում էի ես. դժուար է այստեղ մնալ, առանց բժշկի վստահութիւնն ի չարը գործ դնելու։ Նա իբրև քոյր յանձնեց ինձ Աշխէնին, որ երկու օրից ի վեր իմ սիրականն է»։

«Մի կառք Քիլիսա փողոցից դարձաւ Դիւան-Եօլու փողոցը։ Մտածեցի իսկոյն այդ կառքը նետուել և Ստամբոլ գնալ։ Մի քանի քայլ արի դէպի կառքը, բայց նա արդէն մօտակայ փողոցը մտաւ և մի քանի րոպէ յետոյ նրա անիւների հանած աղմուկն էր միայն լսւում։

Անզգալաբար մօտենում էի Աշխէնին, որ պատի տակ կանգնած աւելի եռանդով էր լաց լինում. գուցէ նա հասկացել էր իմ դիտաւորութիւնը։ Նրան տեսնելով այդ վիճակի մէջ մոռացայ ամեն բան և դիմեցի նրան մխիթարելու։ Ինձ տեսնելուն պէս մի բան կորցնողի ահով և տխուր ժպիտը շրթներին ձեռքն ինձ երկարացրեց. բռնեցի և սեղմեցի հասկացնելու համար, որ այդ դրութեան մէջ առանձին չէ ինքը, և առանց խօսելու դուրս եկանք պարսպի դռնից և Թուրքաց երկու զերեզմանատներն իրարից բաժանող պողոտայով սկսեցինք դէպի տուն յառաջանալ։ Մեր մէջ տիրող լռութիւնը մեզ ճնշում էր և մենք գողում էինք յուզումից ու երկիւղից յառաջանալով շոճիների երկար և մութ ստուերների տակից։ Լուսինը մերթ թափանցում էր բարակ շղարշեայ ամպերի ետև, մերթ բարձրանում էր շտապ, կարծես իրեն բռնողների ձեռքից փախչել շտապելու ճիգով։ Մենք իրար մօտ ձեռք ձեռքի տուած քայլում էինք, երբեմն անզգալաբար իրար ձեռք սեղմելով իրար հաղորդում էինք մեր դողն ու յուզումը։ Ինչ վիճակի մէջ էի—չգիտեմ. չգիտեմ նաև, թէ նա ինչ վիճակի մէջ էր, բայց զգում էի սարսռացուցիչ ջերմութիւն, գուլ և սուր խայթոց, հակասական զգացումներ։

«Կէս ժամից հաղիւ տուն հասանք։ Նոյն

լռութեամբ բարձրացանք նախասենեակը, ուր նա ընկաւ մի աթոռի վրայ, իսկ ես կանգնած մնացի։ Բոպէական լռութիւնից յետոյ նա վախկոտ մօտեցաւ ինձ և ձեռքս բռնելով,

«Նա գնաց, բայց դու ինձ առանձին չես թողնիլ, այնպէս չէ,—ասաց։

«—Երբէք, սիրելիս, երբէք։

«Նրա խօսքերի շեշտը, նրա տար ու վախկոտ շարժումները, նրա տխրութիւնն և կանացի էակի մերձաւորութիւնն ինձ ստիպեցին այդ բառերն ասել, որ յաւիտենապէս դժբաղդացրին մեզ։

«—Քեզ հետ երջանիկ կըլինեմ,—ասաց նա և բոպէական լռութիւնից յետոյ աւելացրեց.—քեզ սիրում եմ խենթի նման։

Համբոյրներով նրան առաջնորդեցի իւր սենեակը և դուրս եկայ։ Դռան յետևից լսեցի, որ նա լալիս է, բայց թէ ինչու—այդ չիմացայ. չիմացայ և մինչև այսօր, թէև այդ լացն ինձ խայթեց»։

Ե.

—Քեզ պատմել, թէ ինչպէս անցկացրինք ամառուայ վերջին ամիսը, անկարելի է։ Իւրաքանչիւր օր նորանոր յուզումներ էր բերում մեզ, և մենք մեր սիրոյ յաւիտենական ռոմանտիզմի մեզ զգում էինք երջանիկներից երջանկագոյնը։ Հետզհետէ ես աւելի ու աւելի էի համակրում Աշխէնին և հետզհետէ աւելի ու աւելի տանջւում, այնպէս որ հակառակ ամենօրեայ վայելածս խնամքներին, դեռ բոլորովին չազդուրուած, դարձեալ հիւանդացայ։ Նա պահապան հրեշտակի պէս երկու շաբաթ շարունակ անքուն հսկեց ինձ վրայ ամբողջ գիշերներ։ Երբ առողջացայ, տօթն սկսել էր նուազել, և բոլորն ամարանոցներից թափւում էին քաղաք։ Մենք էլ փոխադրուեցինք այս տունը, ուր Աշխէնը իւր բնակարանն ինձ հետ կիսեց երեք սենեակ յատկացնելով ինձ. բայց բնակարանի և տեղի փոփոխութիւնն էլ չազդեց մեզ վրայ, և մենք շարունակեցինք սիրոյ և յուզումի կեանքը, ինչպէս սկսել էինք գիւղում։ Թէև չորս ամսից ի վեր մեր կեանքը միօրինակ էր, բայց ամեն օր կարծես նոր յուզումներ և նոր զգացումներ մեզ աւելի շատ մօտեցնում էին միմեանց, այնպէս որ այլևս չէինք քաշւում հասարակութեան մէջ միշտ միասին երևալ ինչպէս նշանածներ և միասին զբօսնել Ճէֆակ-բահչէյի, Օսման-բէյի և Թէփէ-բաշիի կաղնիներում։ Մեզ չէր հետաքրքրում արտաքին աշխարհը, մեզ շրջապատող միջավայրը. մենք չէինք ուզում մտածել, թէ ինչ են խօսում մեր մասին, նոյն իսկ ես չէի հետաքրքրւում մեր դատական գոր-

ծերով, որ յանձնել էի հօրեղբօրդ, որը գալիս էր ամեն օր ինձ հետ խորհրդակցելու և միշտ հեռանում էր անիծելով այն հիւանդութիւնը, որ ինձանից ձեռք չէր վերցնում։

«Սիրոյ կեանքը իսկապէս գեղեցիկ և զուարճալի է, բայց դառն իրականութիւնն աւելի անողոք է։ Մի օր ստիպուած եղայ Աշխէնից բաժանուել, որովհետև գործերը հետզհետէ բարդւում էին, և հօրեղբայրդ իւր անփորձութեամբ սպառնում էր կորցնել դատը, եթէ սիրահարի թմրութիւնից զարթնելով օգնութեան չհասնէի նրան։ Սկսեցի նախկին գործունէութիւնս և ժամանակաւոր խզուած յարաբերութիւններս շարունակել իմ հին աշխարհի հետ։ Այդ ժամանակ իմացայ, որ ինձ և Աշխէնին բամբասում են և մեր յարաբերութիւնների մէջ մեղք են տեսնում։ Թէև չկարողացայ հասկանալ, թէ մի այրի մարդ և մի կոյս աղջիկ ինչ մեղք կարող են գործել, բայց որոշեցի հեռանալ Աշխէնից։ Սկզբում սկսեցի աւելի քիչ յաճախել, յետոյ բոլորովին չգնացի։ Աշխէնը հակառակեց, լաց եղաւ, բայց ի զուր։

«—Սպասիր գէթ,—ասում էր նա,—մինչև որ եղբայրս գայ։

«Մինչդեռ ես հեռանալ էի ուզում օր առաջ մինչև եղբայրը կրգար, որը արդէն ճանապարհ էր ընկել Եմէնից և այցելելով բոլոր

Պաղեստինի և Կիլիկիայի զօրանիստ քաղաքները գալիս է Պոլիս խոլերայի դէմ կռուելու համար իւր գտած միջոցները փորձելու։

«Մի քանի շաբաթ յետոյ, յիրաւի, մի ուրբաթօր, կարդացի պաշտօնական «Սարահ»-ում, որ բժ. Սահակեանն արդէն հասել է Պոլիս։ Նրա գալը մեծ աղմուկ բարձրացրեց. լրագրները գիւտի մասին երկար յօդուածներ էին գրում, առանց ի հարկէ հասկանալու թէ ինչ բանի մասին են գրում. փաշաներն ամեն օր հրաւիրում էին գիտնական բժշկին, վսեմապատիւ Լեոն բէյ Սահակեանին, իրենց մօտ և նրա պացիենտների ցուցակումն էին գրում։

«Ի նկատի ունենալով նրա խառնուած դրութիւնը, առաջիկայ կիրակին չուզեցի գնալ նրան բարի գալուստ մաղթելու և մի շաբաթի չափ յետաձգեցի այցելութիւնս։

«Անցաւ այդ շաբաթը, և ես գնացի նրանց մօտ։

«Ինքը բժիշկը տանը չէր։ Սպասաւորն իմ գալու մասին իսկոյն յայտնեց Աշխէնին, որը մի բոպէ անց սանդուղներից ցած էր վազում. հասաւ ինձ, բռնեց ձեռքս և թիւս մտնելով ինձ առաջնորդեց իւր սենեակը միշտ և անհամբեր կրկնելով.

«—Ո՞ւր էիր երեք շաբաթից ի վեր, քեզ էի սպասում. ամեն բան աջող անցաւ։

«Եւ երբ մտանք իւր սենեակը, և ոչ որ չկար մեզ տեսնող, նա փաթաթուեց վզովս և ասաց.

«—Սրանից յետոյ ես քոնն եմ, և դու իմը, համբուրիր ինձ, սիրելիս, համբուրիր, ինչպէս ես քեզ եմ համբուրում։ Ի՞նչ ես մտիկ անում, ինչու՞ չես ուրախանում. մի՞թէ չես իմանում, որ եղբայրս համաձայնուեց մեր միութեան։

«Եւ անյաղ համբուրում էր ինձ։

«Իմացայ, բոլորն իմացայ։ Ուրեմն Աշխէնն իմ կինը պիտի լինի. չէ՞ որ պարտաւոր եմ ամուսնանալ նրա հետ երդմնագրուած չլինելու համար, բայց դրանով երդմնագրուած պիտի լինէի քո մօր առաջ, որի պատկերը մի բոպէ իսկ չէր հեռանում յիշողութիւնից։ Մինչև այդ օրը մտածում էի, որ բժիշկը չի համաձայնուիլ մի գաւառացու տալ իւր մի հատիկ քրոջը, և ես ազատուած կը լինեմ առ միշտ իմ երդումից, որ անխոհեմաբար և յուզուած դրութեան մէջ արեցի նրա մօտ. բայց ի զուր եմ այդպէս մտածել. սարսափելի իրականութիւնը պարզուեց, և գուցէ հազարերորդ անգամն էր, որ երկու ուրուականներ, երկու պատկերներ դարձեալ ցցուեցին առաջս և ասում էին ինձ «երդմնագրուած...»։ Երկու պատկերներն էլ գեղեցիկ էին, երկուսն էլ բարկացած, բայց ներկայի պատկերն աւելի զօրեղ էր բողոքում և աւելի ուժով էր ինձ քարշում դէպ իրեն, այնպէս որ վայրկենական շփոթութիւնից յետոյ չափազանց հաճութիւն պատճառեց ինձ Աշխէնի յայտնած ուրախ լուրը, թէև երկրորդի սպառնալիքը կծում էր սրտիս մի անկիւնը։

«Իսկ նա միամտութեամբ կրկին ու կրկին սեղմում էր ձեռքս։

«—Ուրեմն համաձայնուեց հա՞։

«—Ուրիշ կերպ չէր կարող անել։ Իբրև եղբայր նրա պարտաւորութիւնն է ինձ երջանկացնել, և ես միայն քեզ հետ երջանիկ կըլինեմ։

«—Մի՞թէ դեռ սիրում ես ինձ։

«Նա մի յանդիմանական և տխուր հայացք ձգեց ինձ վրայ և յանկարծ աչքերը հեռացրեց իմ դէմքից ու խոնարհեցրեց ցած։ Նա տխրեց, նոյն իսկ լաց եղաւ իւր սրտում, և այդ զգացի ես։

«—Աշխէն... վիրաւորուեցիր...

«—Ո՜հ, դու անգութ ես... դու ինձ տանջում ես. մինչդեռ ես քեզ այնքան եմ սիրում։

«Լռեց։ Մի քանի քայլ հեռացաւ ինձանից և շարունակեց.

«—Այո՛, դու ինձ չես հաւատում, որ քեզ սիրում եմ խենթի նման, որ քեզ հետ կատա-

բելապէս երջանիկ կըլինեմ, որ քո որդուն կըսիրեմ հարազատի նման և քո օջախի բոցը, պայծառ կարմիր բոցը կրհալեցնէ իմ ամբողջ էութիւնը ու կրձուլուի ձերայինների հետ։

«—Աշխէն... սպասենք մի քանի օր էլ... գուցէ ծնողներս ինձ չեն ներիլ այս մեղքս...

«—Ոչ, նրանք չար չեն, նրանք քեզ սիրում են և ուզում են, որ երջանիկ լինես, և մենք երջանիկ կըլինինք, հաւատա, որ երջանիկ կըլինինք։ Եղբայրս այսօր մեծ-վեզիրի մօտ է, շուտով նրա միջնորդութեամբ դուք կըստանաք ձեր իրաւունքը, այն ժամանակ դու կըվերցնես մի գումար, որը կաւելացնենք իմ դրամօժիտի վրայ և դրանով կապահովենք մեր զաւակների ապագան, իսկ մնացածը կը թողնես եղբայրներիդ։

«Ճաշի ժամանակ բժիշկը եկաւ, հակառակ սպասածիս նա շատ սիրով և յարգանքով ընդունեց ինձ և հէնց առաջին անգամից յայտնեց ինձ, որ չափազանց ուրախ է, որ Աշխէնն ինձ նման մի բարոյական մարդու արժանիքները կարողացել է գնահատել ու սիրել և որոշել է նրա կինը դառնալ։ Ճաշից յետոյ մեր խօսակցութիւնը դարձեալ իմ և Աշխէնի սիրոյ մասին էր, և հակառակ իմ ջանքերին չկարողացայ փոխել խօսակցութիւնը։ Աշխէնը մեր խօսակցութեանը չէր մասնակցում, այլ միայն

լսում էր մեզ. մերթ գունաթափւում էր ուրախութիւնից, մերթ ամօթի մի կարմրութիւն պատում էր նրա դէմքը և նա տխրում էր, բայց յանկարծ էլի պայծառանում էր նրա հայեացքը, որով կարծես ուզում էր ինձ լափել։ Իսկ ես տանջւում էի։

«Նախընթրիքից յետոյ երեքով գնացինք ման գալու։ Ուշ ժամանակ բաժանուեցի նրանցից և հեռացայ Պերայից խոստանալով որ յաճախ կը գնամ իրենց մօտ»։

Զ.

—Բաժանուելով նրանցից ես խոստացայ նրանց, որ երկու շաբաթ յետոյ մեր նշանդրէքի օրը կորոշենք։ Ես վստահ էի, որ ծնողներս և եղբայրներս պիտի համաձայնեն մեզ հետ, որովհետև բաղդը խոստանում էր մեզ ժպտիլ, և մինթէ վսեմապատիւ Լևոն բէյ Սահակեանի խնամութիւնը մեր գերդաստանի հետ չէր ապահովում մեր ապագան։ Եւ չսխալուեցի. հօրեղբայրդ հէնց այդ օրն իսկ համաձայնուեց ինձ հետ և խորհուրդ տուեց, որ երկրորդ օրն և եթ գրեմ գիւղը ծնողներիս, և նոյն իսկ խոստացաւ, որ ինքն էլ իւր կողմից մի ուրիշ նամակով կընկարագրի մեր ամուսնութեան հետևանքը ծնողներիս և նրանց կրհամոզի, որ

անպայման համաձայնուեն մեզ հետ։ Եւ իրաւ, երկրորդ օրուայ սուրհանդակով մենք ուղարկեցինք երկու նամակ, իսկ ես երեկոյեան գնացի Պերա։ Մեծ-փողոցում հանդիպեցի Սահակեաններին և բժշկի հետ դարձեալ խօսակցութիւն ունեցանք իմ և Աշխէնի ապագայի մասին։ Ի միջի այլոց նա էլի կրկնեց, որ միայն ես կարող պիտի լինեմ երջանկացնել իւր քրոջը և նրա ընտանեաւորութիւնը պիտի ձուլեմ իմինի հետ, որով երջանիկ կըլինի առհասարակ մի որ և է ընտանիք. իսկ ինչ վերաբերում է պոլսեցի երիտասարդներին, նա ասաց, որ նրանք փչացած են և չեն կարող առհասարակ մաքուր և բարոյական ընտանիք կազմել։ Աշխէնն էլ իւր կողմից դարձեալ աւելացրեց, որ ինքը վստահութեամբ ինձ է յանձնում իւր ապագան։ Ի՞նչ երկարացնեմ, նախորդ օրուայ խօսքերը մի քանի անգամ դարձեալ կրկնուեցին։ Օսման բէյի կաղինոյում միասին մի շիշ գարեջուր խմելուց յետոյ ես և Աշխէնը գնացինք տուն, և ուշ ժամանակ միայն հեռացայ նրա մօտից խոստանալով երկրորդ օրն էլի այցելել իրենց։ Եւ այսպէս շարունակ մինչև նամակիս ստացուելը միշտ նրանց մօտ էի լինում։ Աշխէնի հետ զբօսնում էինք ամեն երեկոյ Պերայի այս և այն այգիներում, ընդունում էինք սրա-նրա կասկածամիտ բարեները և կատարեալ երջանիկ մարդկանց նման ժպտում էինք բոլորին։ Սէրը մարդկանց երեխայացնում է, և գուցէ հէնց նրանումն է նրա կենսունակ զօրութիւնը։ Միշտ մեր խօսակցութիւնը դառնում էր մեր ապագայի շուրջը։ Նա անընդհատ շաղակրատում էր, թէ ինչպէս պիտի սիրի քեզ, իմ որդուն, ինչպէս պիտի կրթէ նրան և որքան երջանիկ պիտի զգայ ինքն իրեն եթէ ամեն գիշեր կարողանայ միայն քեզ համար աշխատել։ Իսկ եթէ երբեմն խօսք էի բաց անում ինձ ընտրելու անպատեհութեան մասին և ասում էի, որ աւելի յարմար փեսացուներ կան Պոլսում, նա իսկոյն խոժոռում էր դէմքն, պինդ սեղմում էր թեւս, ինձ յանդիմանում էր բաւականին իրեն չսիրելու համար և խնդրում էր, որ ուրիշ անգամ այս չաներես և անբարոյականացած խարերաների անունը չարտասանեմ իւր մօտ։

«Օրերն անցնում էին, մեր շրջանում խանդոտ խօսակցութեան նիւթ էր դառել մեր անյուսալի ամուսնութիւնը։ Նրանք մեզ բամբասում էին, ինչպէս ասացի քեզ, և նոյն իսկ նրանցից մէկն ինձ խորհուրդ տուեց յարաբերութիւններս խզել Սահակեանների հետ և այլ ևս չմտածել Աշխէնի մասին, եթէ չէի ուզում ծիծաղի արժանի հերոս դառնալ այն սկանդալին, որը սարքում էին նրանք, Սահակեանները, և որոնք այդ սկանդալի զոհ են դարձրել և ու-

րիշ շատերին։ Երբեմն էլ անսիրտ խօսքերով կծու նկատողութիւններ էին անում իմ նշանածի վարք ու բարքի մասին և ասողներ էլ եղան նոյն իսկ, որ բժիշկը ինձ չի համակրում, Աշխէնն ինձ չի սիրում, այլ նրանք միայն մտածում են իմ պատուաւոր անուան տակ թաղցնել իրենց անպատիւ անունը։ Աշխէնը, նրանց խօսքով, արդէն յանձնուել էր մի քանի անծանօթ տղամարդկանց, որոնք, սակայն, վարուել էին ինչպէս ջէնտլմէն, այսինքն օգտուել էին նրա թոյլ բարոյականութիւնից և յագենալուց յետոյ թողել էին նրան երեսի վրայ ու հեռացել։ Այդ ջէնտլմէններից նոյն իսկ մի քանիսը պատուաւոր ընտանիքների զաւակներ են և նոյն իսկ այժմ նրանք ունեն իրենց առանձին ընտանեկան յարկը։ Սկզբում ես ուշադրութիւն չէի դարձնում լսածներիս վրայ, բայց նրանց յաճախակի կրկնուիլն ինձ ստիպեց մտածել այդ մասին, և սկսեցի աւելի քիչ անգամ գնալ Պերա, աւելի քիչ անգամ «երջանկացներ» Աշխէնին իմ այցելութեամբ, ինչպէս ասում էր նա, թէև նրանից հեռանալ անտանելի էր պարզապէս։ Այլևս մեզ պէտք էր դառել միշտ իրար մօտ լինել, իրար հետ խօսել անվերջ, զգալ, լալ, ուրախանալ, այլևս մեզ չէր բաւականացնում օրուայ մի քանի ժամերի տևողութեան ընթացքում երկուստէք մեր վայելած երջանկու-

թիւնը. մենք ջանում էինք որքան կարելի է շուտ աւելացնել այդ ժամերը, այդ երջանկութեան տևողութիւնը. նոյն իսկ նա ինձանից խնդրեց, որ առաջուայ նման գիշերներն էլ իրենց մօտ անցկացնեմ, բայց չհամաձայնուեցի, թէև ինձ համար երջանկութիւն էր այն, որովհետև նրա ներկայութեանը մոռանում էի իմ իրական սարսափելի դրութիւնը և անձնատուր էի լինում երջանիկ ապագայի յոյսերին։ Ես ուզում էի միշտ նրա մօտ լինել, այո, նրանից հեռու յիշում էի ես միշտ մօրդ, մեր անցկացրած կեանքն իրար հետ, նրա սէրը, իմ փոխադարձ երկրպագութիւնը նրան, նրա մահը, և շատ անգամ մենութեան մէջ տեսնում էի նրա տխուր ուրուականը յուսահատ ժպիտը շրթներին, որ ինձ յիշեցնում էր այն ուխտը, որ հասարակութեան մէջ կռեցինք իրար հետ։ Եւ ժամերով տանջւում էի։ Շատ անգամ սակայն ինձ այնպէս էր թւում, որ իբր թէ Զուշանիկն և Աշխէնը, երկու պատկերներ, հոգուս մէջ ի մի ձուլուած էին, նրանք ոչնչով իրարից չէին զանազանւում, թէև շատ անգամ մօրդ հետ անցկացրած տասը երկար տարիներս և վայելած երջանկութիւնս աւելի էր ազդում իմ զգացումների վրայ և բոլէաբար Աշխէնին բաժանում էի նրանից ու շարունակական տանջանքի մէջ ընկնում։ Միայն Աշխէնի ներկայու-

թիւնն ինձ ազատում էր այդ անմիտ տանջանքներից, և սպասում էի անհամբեր այն օրուան, երբ նա իմ կինը կըդառնար և նրա շարունակական ներկայութեամբ ինձ մօտ կըկարողանայի այդ երկու էակներին ի մի ձուլել և մէկի մէջ սիրել միւսին, երկրորդի մէջ պաշտել առաջինին։

«Եւ սպասում էինք նամակիս պատասխանին, որ չուշացաւ սակայն։ Այդ պատասխանն երկու երեսից բաղկացած և անվարժ ձեռքով գրուած մի թերթ էր։ Ստորագրութիւնը քոնն էր։ Գուցէ կըյիշես պարունակութիւնը»։

Հայրս լռեց։

Այո, սկսեցի յիշել այդ անիծուած նամակի պարունակութիւնը, որ գրեցի մեծ մօրս թելադրութեամբ, երբ դեռ եօթը տարեկան էի։ Դրանով պախարակում էի հօրս, որ մի հատիկ զաւակին, ծերունի ծնողներին և նախկին կնոջ յիշատակը մոռացած ուզում է ամուսնանալ երկրորդ անգամ և այն էլ «քաղքցի աղջկայ» հետ, որն արդէն պղծել է իւր կուսական անունը և որ կըպղծի նոյն իսկ իւր (հօրս) հայրական, որդիական և ամուսնական զգացումները։ Ցետոյ աւելացնում էի, ի հարկէ նոյնպէս մեծ մօրս թելադրութեամբ, որ եթէ նա կամուսնանայ մի անառակ կնոջ հետ, ես նրան հայր չեմ կոչելու և ողբալու եմ իմ բաղ-

դը, որ այնքան դառն էր ժպտում ինձ, անիծելու եմ իրեն, նոյն իսկ մօրս յիշատակը, որ շուտ մեռնելով տեսի էր տուել հօրս երկրորդ անգամ ամուսնանալ և ինձ խորթ մօր յանձնել։ Վերջապէս գրում էի, որ մեծ հայրս, մեծ մայրս և մեր բոլոր ազգականները հակառակ են այդ ամուսնութեան։

Գուցէ այս նամակն ինձ թելադրելիս մեծ մայրս մտածել է, որ որդին ստամբոլցի աղջիկ առնելով առ միշտ կըհեռանայ գիւղից, այո, այդպէս կըլինէր երևի, իսկ այժմ առանց ամուսնանալու էլ հայրս մոռացել է գիւղը և ապրում է միայն ինձանով։

Նամակի պարունակութիւնը յիշելով, յիշեցի և օր. Սահակեանին։ Ի՞նչ հոգի ունէր նա։ Ես էի կործանել հօրս, իմ և մանաւանդ իւր երջանկութիւնը, բայց նա ինձ սիրեց միշտ, և որքան վսեմ էր նրա սէրը։

Հայրս լաց էր լինում։ Ես մտածում էի։

Մի քանի բոպէ յետոյ ձեռքը համբուրեցի և ներողութիւն խնդրեցի անդիտակցաբար գործած մեղքիս համար։

—Հայր, շատ յուզուել ես,—աւելացրի,—այլևս չմտածենք անցեալի մասին. վեր կաց, բեղ առաջնորդեմ ննջասենեակդ. կէս գիշեր է արդէն։

Նա բարձրացաւ նստած տեղից և թոյլ

տուեց, որ իրեն առաջնորդեմ ուզածիս պէս։ Ննջասենեակը հասնելով նա ազատեց իւր թևը իմ ձեռքերից, որոնցով բռնած բերեցի նրան, և խսկոյն թոյլ ու մեղկ ընկաւ մի թիկնաթոռի մէջ։ Նա դողում էր։

Մի քանի րոպէ լուռ արտասուեց։ Յետոյ ընկաւ մտքերի մէջ և այնպէս խորասուզուեց, որ պարզ երևում էր, թէ իւր յիշատակների մէջ փնտռում է Աշխէնի դէմքը։ Վերջապէս արտասուքը սրբելով ասաց ինձ.

—Վահան, վերցրու մի աթոռ և նստիր ինձ մօտ։ Ես ուզում եմ այսօր ամեն բան վերջացնել անցեալիս հետ, որի վերյիշումն ինձ տանջում է։ Ես չեմ ուզում ուրիշ անգամ խօսք բաց անել այդ մասին։ Ամեն ժամանակ, երբ մտածում եմ, որ Աշխէնը չէր մեռնիլ այնքան շուտ, և ես դժբաղդ չէի լինիլ այնքան երկար... ա՜խ...

Ձայնը խեղդուեց կոկորդում, չկարողացաւ շարունակել ասածը, արտասուքի երկու խոշոր կաթիլներ գլորուեցին սպիտակ միրուքի վրայ։ Մի քանի րոպէ լռելուց յետոյ շարունակեց.

—Կարդալով նամակդ շանթահարուեցի։ Այդ թղթի կտորը իւր հետ ահռելի նկարներ էր բերել գիւղից։ Մի ինչ որ նախապաշարում ինձ ստիպում էր հաւատալ, որ դու այդ տողերը գրել ես մօրդ հոգու ներշնչութեամբ, որ

ամուսնանալուս համար թափառում է անհանգիստ օր ու գիշեր իւր խաղաղութիւնը կորցրած։ Մի րոպէում անմիտանալի կերպով բաժանուեցին իրարից հոգուս մէջ ի մի ձուլուած Զուշանիկն ու Աշխէնը. այլևս նրանք ինձանից սիրուած և ինձ սիրող երկու էակներ չէին, այլ զոհեր, որոնք ինձանից վրէժ էին պահանջում, ինձանից հանգստութիւն էին խնդրում։ Ինձ թւում էր, թէ մայրդ գերեզմանից դուրս եկած կմախքով դեգերում և գերեզմանատանը ցատկոտում է մի շիրմի վրայից երկրորդի վրայ միշտ ու անդադրում, կարծես իրեն հալածում են, հալածում են իմ ապագան, իմ յոյսերը։ Ցանկարծ նա կանգնում էր դէմս, անողոք աչքերը յառում էր վրաս և ինձ յիշեցնում էր այն ուխտը, որ կնքեցի իրենից մինչև մահս անբաժանելի մնալու համար։ Նա ինձ կոչում էր իմ խղճի խորքերից լսելի յստակ ձայնով «երդմնադրուժ...»։ Միայն այդ չէր։ Նրա անողոք և ահռելի կմախքի մօտ ընկած լաց էր լինում Աշխէնը, որ իմ սիրային թուլութեան զոհն էր։ Մայրդ ցոյց էր տալիս նրա վրայ, կարծես ասելիս լինէր. «Քո վաւաշոտութեան զոհն է այդ...»։ Անձնասպան կըլինէի անպայման, բայց Աստուածանից վախենում էի։ Եւ սենեակումս առանձնացած ժամերով մտածում էի առանց որ և է եզրակացութեան յանգելու։ Սենեակի

օդն ինձ խեղդում էր, բայց չէի համարձակւում դուրս գալ այնտեղից, ամաչում էի մարդկանց երևալ, նոյն իսկ պատերը փսփսում էին ականջիս. «Ահա մի մարդ, որ նախորդ կնոջ ոսկորները գերեզմանից դուրս բերեց երկրորդ անգամ ամուսնանալ փորձելով»: Ախ, սարսափելի էին այն բոպէները:

Հայրս դողաց, գուցէ սարսափից:

—Չեմ յիշում, որքան ժամանակ մնացի սենեակում նամակդ կարդալուց յետոյ,—շարունակեց նա կարճ լռութիւնից յետոյ,—միայն յիշում եմ, որ անդգալաբար գնացի Սիրբէջիի շոգեկառքի կայարանը, և մի տոմսակ վերցրի Ադրիանուպոլիս գնալու համար:

«Ցնցւում էր շոգեկառքը, ցնցւում էի ես բոլոր մարմնով, բոլոր զգացողութեամբս: Պոլսից որքան հեռանում էի, կարծես ճնշումը թեթևանում էր, և անիծում էի մերենավարին, որ աւելի արագ չի վազցնում շոգեկառքը»:

Է.

—Պոլսից մեկնելուս մասին ոչ որի չէի յայտնել, Ադրիանուպոլսից էլ ոչ որի նամակ չգրեցի, մինչև իսկ հօրեղբօրդ: Մոռացել էի ամեն բան և միայն անձնատուր էի եղել մօրդ և Աշխէնի հետ անցկացրած օրերիս յիշատակներին: Ցիշելով վերջինին բոլոր մարմնով դողդողում էի այն յանցաւորի նման, որին մի քանի բոպէ յետոյ դատաւորի առաջ պիտի հանեն: Մօտ մի ամիս մնացի Ադրիանուպոլսում անյուսալի տխրութեան մէջ: Երբեմն մտածում էի հեռանալ աշխարհից, առանձնանալ մի վանքում առանց ոչ որի երևալու, ընկնել շարունակ Աստուծոյ առաջ, պաղ քարերի վրայ, համբուրել գետինը, մինչև որ Նա, իւր անհուն բարութեամբ ներելով ինձ մեղքերս, թոյլ կը տար ծերութեանս օրերին խաղաղութիւն և անդորրութիւն վայելել. ուսումնարանական սեղանների վրայից միշտ դրա մասին էի մտածում: Մանաւանդ չէի ուզում Աշխէնին հանդիպել՝ երևակայում էի, թէ որքան պիտի յուսահատուէր նա, եթէ յայտնէի ստացածս տխուր լուրը: Նա կը մեռնի, մտածում էի ես. անպատճառ կը մեռնի իմ հարուածով, իմ որդուս տուած հարուածով: Եւ տանջւում էի, տանջւում էի շարունակ:

«—Ադրիանուպոլիս հասնելով իջևանել էի «Ֆրանսիա» հիւրանոցում և մի ամսուայ ընթացքում հազիւ մի շաբաթուայ վարձ էի վճարել սեպհականատիրոջ: Մի քանի անգամ խնդրեցին վճարել, մի քանի անգամ նկատողութիւններ արին, մի քանի անգամ էլ պահանջեցին, բայց ես չունէի մօտս վճարելու համար

պարտքս և առարկում էի նրանց, թէ Պոլսից փողի եմ սպասում, թէև ոչ ոքին չէի գրել, որ ինձ փող ուղարկեն։ Առանձնութեան մէջ ուզում էի ամօթս պարակել։ Սակայն ինչ հոգ հիւրանոցի տիրոջը, թէ ես տանջւում. եմ. նա պահանջում էր իւր առնելիքը և սպառնում էր ոստիկանութեան յանձնել ինձ, եթէ մի քանի օր յետոյ էլի պարտքս անվճար կըմնար։ Նա սպառնաց, դրականապէս սպառնաց։ Ի՞նչ։ Այդ էր պակաս։ Բարոյական անունս արատաւորելուց, հոգեկան անդորրս վրդովելուց, ամօթից ազատուելու համար Պոլսից փախչելուց յետոյ բանտ նստել Ադրիանուպոլսում—այդ միանգամայն անսպասելի և զզուելի բան էր, ուստի իսկոյն գրեցի հօրեղբօրդ, որ հեռագրով փող հասցնի ինձ։ Երեք օր յետոյ ստացայ որոշուած գումարը և մի նամակ, որի մէջ նա բացատրում էր մեր դատական գործերի դրութիւնը և գրում էր, թէ որքան վտանգաւոր պայմանի մէջ են այդ գործերը և առանց իմ ներկայութեան անպատճառ կը կորցնենք առ միշտ մեր դատը։ Եւ նա վերջացնում էր նամակը հետեւեալ բառերով.—«Իւր քրոջ շարունակական ստիպումների վրայ բժ. Սահակեանը դիմեց ոստիկանութեան մինիստրին և խնդրեց, որ հրահանգներ ուղարկէ ամեն տեղ քեզ գտնելու համար։ Մենք անհամբեր քեզ ենք սպասում։

Քո հեռանալը բամբասանքի տեղիք տուեց և մեր ու Սահակեանի անունը խաղալիկ է դառել բոլորի բերանին։ Մեր պատիւը վտանգի մէջ է. մեր գործերը վտանգի մէջ են. եկ, շուտ եկ։ Անհամբեր քեզ ենք սպասում»։ Այդ նամակն ինձ ազատեց, մի բոպէում աչքիս առաջ պատկերացան, քո, ծնողներիս, եղբայրներիս դէմքերը, անցեալ կեանքիս յիշատակները, բժ. Սահակեանի բարեկամութիւնը և Աշխէնի նեղողամիտ հոգին։ Զգացի, որ անմիտ բան է մտորել այդպէս անյոյս, անշահ, զգացի, որ պէտք է կանոնաւորել, մի ելք տալ իմ և Աշխէնի յարաբերութիւններին, քանի որ նրան հաւատացրել էի, որ երկու կամ երեք շաբաթ յետոյ անպայման վճռուած կըլինի իւր ապագան, իսկ այժմ արդէն երկու ամիս էր անցել։ Ուստի որոշեցի իսկոյն Պոլիս վերադառնալ և այնտեղ զբաղուել առօրեայ իրական կեանքով. յոյս ունէի, որ իմ գործունէութիւնն ինձ շուտ պիտի կարողանար մոռանալ տալով իմ անցեալը և կրածս յուզումները։

«Եւ եկայ Պոլիս։

«Ինչպէս ճշտութեամբ նկատել էր հօրեղբայրդ իւր նամակում, շուտ հասկացայ, որ իմ յանկարծակի անհետացմանն այլ և այլ տարաձայնութիւնների տեղիք է տուել, և բոլորն էլ կարծում էին, որ Աշխէնից խաբուած լինե-

լուս գիտակցութիւնն է պատճառ տուել ինձ հեռանալ Պոլսից և օտար քաղաքում ամօթս պարակել: Վերադարձս էլ ահագին խօսակցութեան նիւթ դառաւ: Հար լեզուները հաւաքուեցին շուրջս և ջանում էին գաղտնիքներ կորզել ինձանից, բայց բոլորն էլ ձեռնունայն հեռացան: Իմ գալու մասին շուտ լսեց և Աշխէնը, նա եկաւ մեզ մօտ, բայց առանց ինձ տեսնելու հեռացաւ, որովհետև ծառային պատուիրել էի եկողներին յայտնել, որ տանը չեմ, ով և լինի այդ եկողը: Երկրորդ օրն ես գնացի Պերա Սահակեանների Թակսիմ-փողոցի բնակարանը: Դուռն Աշխէնը բացաւ. գուցէ զգացել էր, որ զանգահարողն ես եմ եղել: Նա խլոյն փաթաթուեց վզիս և մի քանի անգամ իրար յետևից համբուրեց: Յետոյ յանկարծ հեռացաւ ինձանից և հարցրեց ձեռներս բռնելով.

«—Ո՞ւր էիր երկու ամսից ի վեր. ինչու չէիր գալիս մեզ մօտ. ուր էիր գնացել:

«Հպատասխանեցի, ջանացի ձեռիցն ազատուել. նրա իւրաքանչիւր համբոյրն այրում էր այտերս և ամբողջ ջիղերիս վրայ ցնցում էր առաջացնում: Նա դարձեալ հեռացաւ ինձանից, յետոյ բռնեց ձեռներս և սկսեց մտիկ անել դէմքիս, յանկարծ մի ճիչ արձակեց և ընկաւ թեներիս մէջ: Մի քանի րոպէ մնաց այդպէս. նրան գրկած բարձրացրի վերև: Նա մի

քանի անգամ էլի նայեց ուշադրութեամբ և ասաց.

«—Ա՛խ, որքան փոխուել ես, նիհարել ես, աչքերդ փոսն են ընկել. երևի հիւանդ էիր երկար ժամանակ:

«Ես շուարած մնացել էի:

«—Ասա՛, ասա՛, մի՞թէ հիւանդ էիր, ինչ է պատահել քեզ. ուր էիր, ասա՛, չուտ ասա:

«—Ո՛չ, հիւանդ չէի. այլ և այլ մտածութիւններ և յուզումներ ինձ վրայ ազդեցին. ոչինչ չունեմ, միամիտ կաց:

«—Եւ այդ ի՞նչ յուզումներ էին, որ քեզ այդքան մաշեցին: Դու լռում ես... չլինի՞ մի վատ բան պատահած լինի: Երկու ամսից ի վեր ուր էիր...

«Ի՞նչ կարող էի պատասխանել: Իմ ասելիքը նրան մահացու հարուած պիտի տար, բայց լռել էլ անկարելի էր: Մի քանի րոպէ երկմտելուց յետոյ ասացի.

«—Քեզանից հեռացայ, որովհետև ուրիշ բան չէի կարող անել:

«—Ա՛հ...

«Նա ճչաց և ընկաւ դիւանի վրայ: Մի քանի րոպէ ճնշող լռութիւն տիրեց մեր մէջ: Նա լալիս էր: Ես դողում էի յուզումից:

«—Այո՛... ուրիշ բան չէիր կարող անել... չէիր կարող... այդ ճշմարիտ է....

«Լռեց դարձեալ, ձեռների մէջ առաւ գլուխը և շարունակեց հեկեկալ։ Նա ցնցւում էր, նրա յետ ցնցւում էր դիւանը, նրանց հետ ցնցւում էի և ես։

«—Այո... ուրիշ կերպ չէիր կարող անել... ես ստոր եմ... ես խաբեբայ եմ...

«Ծունկ չոքեց յանկարծ առաջս, գլուխը կախ դցեց և ձեռները տարածելով շարունակեց.

«—Ներիր ինձ, Միքայէլ, ներիր ինձ. հաւատա, որ անմեղ եմ. իրաւ է, ես քեզ խաբեցի... բայց քեզ շատ, շատ եմ սիրում... այդ ճշմարիտ է...

«Սկսեցի հասկանալ, որ նա... ահ տէր Աստուած, որ ճշմարիտ են ասում բոլորը... նա անառակ է, ինքն էլ է այս խոստովանում. բայց որքան աղիողորմ կերպով է զղջում նա իւր յանցանքը, որքան յուսահատական է նրա դրութիւնը և որքան հաւատում է ներողամտութեան...

«—Ներիր... ներիր...

«Չկարողացայ երկար մտիկ անել արտասուող Աշխէնի վրայ, թեքուեցի և վերցրի նրան ու նստացրի դիւանի վրայ։

«—Համբուրիր ինձ և այդ համբոյրը թող քո ներողամտութիւնը և իմ երջանկութիւնը լինի։ Դրանով ես ինձ արդար կզգամ քեզ

մօտ և իմ ամուսնական կեանքում խղճի խայթ չեմ ունենալ։ Ժպտում ես... ախ, ուրեմն ներեցիր ինձ, հհ. որքան բարի ես...

«Այո, ես ժպտում էի, դառն, սպանիչ ժպտով. ես տանջւում էի և այդ ժպիտը իմ տանջանքի թունաւոր ծաղիկն էր, մինչդեռ նա թագցրեց գլուխը ձեռների մէջ և շարունակեց աւելի եռանդով լաց լինել։ Այդ լացն իւր անցեալ թշուառութեան յետին մնացորդն էր, որ տեղի էր տալիս երջանիկ օրուայ արշալոյսին, երբ թափանցիկ մառախուղն սքողում է երկնքի երեսը։ Նա յուսում էր, իսկ ես նրան ստիպեցի աւելի յուսալ։ Նրա հոլումն ինձ անբնական ցնցում առաջ բերեց ինձանում և ես անգիտակցաբար համբուրեցի նրա մազերը։ Նա էլ ցնցուեց բռնեց ձեռներս և ջղաձգական շարժումով մօտեցրեց կրծքին։

«—Այս սիրտը ոչ մի ժամանակ այնքան ուժգին չի բաբախել, որքան այժմ է բաբախում, կարծես ուզում է կոտրել, խորտակել կուրծքս և դուրս թռչել։ Կեանքումս ոչ ոքի այնպէս չեմ սիրել, որքան քեզ եմ սիրում. և միայն այժմ եմ զգում, որ իսկապէս սիրում եմ, թէև անցեալում շատերին էի հաւատացրել թէ սիրում եմ իրենց... ես քեզ սիրում եմ խենթի նման...

«Նա ուզեց գլուխը դնել կրծքիս։

«—Այո, ես ունեցել էի սիրահարութիւններ, բայց ոչ ոքին անկեղծ չէի սիրել և ոչ ոքից անկեղծ չէի սիրուել։ Դրանք պատանեկան վառ ցնորքներ էին, որ տիրել էին սրտիս և մտքիս, և հէնց այդ ցնորքներն էին, որ ինձ ստիպեցին անձնատուր լինել մի խաբեբայի, որ խոստացաւ ամուսնանալ ինձ վրայ և հեռացաւ ինձանից, երբ այլևս իմ սէրը կորցրել էր իւր նորութիւնը։

«Ես աւելի ու աւելի հեռու էի փախչում։

«—Ո՛հ, մի մեղադրիլ ինձ. ես խաբուեցի բայց մաքուր եմ... Դու չես հաւատում, որոհետև ուրիշները քեզ վատ, շատ վատ կերպով նկարագրեցին իմ անցեալն և իմ ներկան...

«Մի քանի քայլ էլի հեռացայ նրանից։ Այլ ևս նա ինձ համար տանջուող մի հրեշտակ չէր, որ իմ սիրուց և իմ երդումներից է խաբուել, այլ մի կին, որ իւր եղբօր հետ մեղսակցած խաբում էր ինձ տասն ամսից ի վեր և ուզում էր գնել իմ պատուաւոր անունը մի քանի ոսկով և զուր յոյսեր տալով։ Եւ հեռանում էի նրանից, քայլերս դէպի դուռն ուղղած։ Նա մի քանի քայլ հետևեց ինձ, ահագին մի ճիգ գործեց բղաւելու, ինձ գրկելու, իմ յետևից գալու համար, բայց զսպեց իրեն և, իւր յանցանքի ծանրութեան տակ կատարելապէս ճնշուած, քաշուեց պատի տակ,

կրթնեց նրան և թոյլ ձայնով ասաց վերջին անգամ.

«—Հաւատացնում եմ, որ անմեղ եմ։

«Նրա դրութիւնն ինձ յուզում էր. գերբնական ճիգ էի թափում նրանից առ միշտ հեռանալու համար, բայց չէի կարողանում. նա յուսահատ դրութեան մէջ ձուլուեց դարձեալ մօրդ հետ և ինձ ստիպում էր խոնարհել իւր առաջ և երկրպագել իրեն։

«Բոպէական տատանումից յետոյ դանդաղ մօտեցայ նրան։ Նա ալուր և մելամաղձոտ հայեացքը յառեց ինձ վրայ, արտասուակալած աչքերով ժպտի նման մի բան էր փայլում, և իմ ձեռից բռնելով վախկոտ ձայնով հարցրեց.

«—Ներում ես ինձ։

«—Այո։

«—Ուրեմն շուտով կամուսնանանք...

«—Ո՛չ...

«Նա սպրտնեց, դողաց ու փախաւ իմ մօտից։

«—Ո՛չ... մի ամուսնանալ, չեմ ուզում... Դու ինձ խաբում ես... Մինչդեռ ես քեզ այնքան մեծահոգի էի կարծում... Գնա... Գնա... Հեռացիր այստեղից... Ինչու ես նայում ինձ վրայ, ուզում ես իմ գաղտնիքն իմանալ... ուզում ես իմանալ, թէ որ սրիկան խաբեց ինձ և այժմ զուարճանում է իմ թշուառու-

թեամբ... Բայց ես թշուառ չեմ... Ես էլ եմ զուարճանալու... Ես էլ եմ զուարճանալու առ-միշտ... հա, հա, հա...

«Նա վայրենի ու անբնական կերպով ծի-ծաղեց, յետոյ ուժաթափ ընկաւ յատակի վրայ ու սկսեց իւր ձեռներով խեղդել իրեն։ Նա հեկեկում էր, հեկեկում ջղաձգաբար. նրա կուրծքը խորտակւում էր, և նա խեղդում էր, խեղ-դում էր իրեն, իւր վերջնազգեստի օձիքով։ Մի բոպէ ապուշի նման նայեցի նրա երեսին և առանց ոչինչ ասելու կամ զգալու դուրս ե-կայ սենեակից։ Նախագաւթում մի քանի բոպէ անշարժ մնացի կանգնած և չէի իմանում ինչ անեմ։ Յանկարծ լսեցի նրա ձայնը։ Նա լալիս էր բարձր ձայնով։ Անդգալաբար յետ դարձայ, մտայ սենեակ. նա միշտ լալիս էր ընկած գրու-թեան մէջ։

«—Աշխէն... առ... առ այս նամակը և կարդա...

«Եւ դցեցի ուղարկած նամակդ նրա առաջ ու դուրս փախայ յիմարի նման, ցած վազեցի սանդուղներով և դուրս եկայ տնից։ Փողոցի մաքուր օդը թարմացրեց ջիղերս, և միայն այն ժամանակ զգացի, թէ ինչ պատահեց ինձ հետ մի քանի բոպէ առաջ և թէ որքան տանջում է ինձ այդ։ Եւ փախայ Թակսիմ փողոցից, փախայ առ միշտ։

«Մի քանի օր յետոյ բժիշկը հրաւիրեց ինձ իւր մօտ։ Առանձին խօսակցութիւն ունե-ցանք մի ժամի չափ։ Նա ինձ բացատրեց, թէ ինչ է հետևելու իմ մերժումին և թէ որքան դժբաղդ պիտի լինի Աշխէնը, քանի որ իմ հե-ռանալը նրան անպատուութեան և անառակու-թեան անունով պիտի մկրտի։ Ոչինչ չպատաս-խանեցի։ Նա խնդրեց ինձանից չհրաժարուե-լու իմ խոստումից, առաջարկեց, վերջապէս սպառնաց, բայց ես միշտ ժխտական պատաս-խան էի տալիս։ Նա գուցէ ծառաների միջոցով դուրս անել կըտար ինձ խայտառակելով, եթէ Աշխէնը չլինէր, որ քո նամակը կարդալուց յե-տոյ ներողամտութեամբ էր վարւում ինձ հետ։

«Նրանից յետոյ այլևս չգնացի նրանց մօտ։ Աշխէնն սկզբում ինձանից խուսափում էր հա-սարակութեան մէջ, բայց շուտով իւր կա-լուածների կառավարութիւնն ինձ յանձնեց, որ և կատարեցի մինչև տանուլ տուի մեր դատը և սնանկացանք։ Յետոյ բոլորը երես դարձրին ինձանից, նոյն իսկ հարազատ եղբայրս էր, որ ինձ ստիպում էր անպատճառ ամուսնանալ Աշ-խէնի հարստութեան հետ։

«Աշխէնը մինչև մահ ինձ սիրեց. նա պա-հեց իւր մօտ քո նամակը և քեզ մօր պէս խնամեց։ Նա ապրեց անառակութեամբ, աշ-խարհային զուարճութիւնների մէջ, փորձեց մո-

ռանալ իւր անցեալը, որ այնքան տխուր էր, իւր ներկան, որ այնքան դժբաղդ էր, և չմտածեց իւր ապագայի մասին, որ սպառնում էր իրեն և որ նրան մահացրեց շատ անդութ կերպով»։

Հայրս լռեց։ Մի բանի րոպէ ինչ որ խորհրդաւոր բան ճնշում էր մեզ։

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/31 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

NL03208 15
«Սպասյան գրադարան»

Человеколюбивое

Общество